ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

2 (71)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 2 (71), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Վահրամ Հովյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 2 (71), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Գագիկ Հարությունյան
«Քառօրյա պատերազմի» դրդապատճառների շուրջ 5

Հայկ Գաբրիելյան
ԻՊ-ին Թուրքիայի չքողարկված աջակցության շուրջ 10

Հայկ Գաբրիելյան
Թուրքիայի արտաքին քաղաքականությունը 22

Ջոնի Մելիքյան
Վրաստանի արտաքին քաղաքականությունը 32

Անուշավան Բաբսեղյան
Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը 39

Ռոման Կարապետյան
Իրանի արտաքին քաղաքականությունը 47

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Սամվել Մարտիրոսյան
Տեղեկատվական հակամարտություն վիրտուալ հակառակորդի հետ.
ադրբեջանական քարոզչության յուրահատկությունները 57

Մարիամ Խալաթյան, Դիանա Գալստյան
«Հայաստան» իդեոլոգեմը հայաստանյան լրատվամիջոցներում 62

Հուշագիր հեղինակին 69

Տարածաշրջան

«ՔԱՌՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գագիկ Հարությունյան[*]

Ադրբեջանի ձեռնարկած ռազմական գործողությունների և հայկական կողմի կոշտ հակահարվածի իրողությունը վերլուծաբանական հանրությունում դեռևս երկար է քննարկվելու, և նման վերլուծություններից կատարված հետևությունները կարող են կարևորվել հետագա զարգացումներում: Այդ համատեքստում փորձենք համառոտ ներկայացնել որոշ դիտարկումներ՝ կապված ապրիլյան իրադարձությունների հետ:

Գլոբալ ռազմավարական հարթություն

Ցանկացած նշանակալի քաղաքական գործընթաց մեկնաբանելիս առաջին հարցը, որի պատասխանը ձգտում են տալ մեկնաբանները, այն է, թե ում էր դա ամենից ձեռնտու: Եթե խնդիրը դիտարկենք գլոբալ զարգացումների տեսանկյունից, ապա պետք է արձանագրել, որ այսօր ընթացող «Սառը պատերազմում» հիմնական դերակատարներն են հանդիսանում ՌԴ-ն և ԱՄՆ-ը, և նրանց հակամարտության արտահայտությունները միայն ուկրաինական խնդրի (Ղրիմ, Դոնբաս և Լուգանսկ) շուրջ տեղի ունեցող ռազմաքաղաքական և տնտեսական գործընթացները չեն: Ռազմավարական տեսանկյունից նույն տրամաբանությանն է ենթարկվում նաև Սիրիայում կատարվողը, որտեղ ՌԴ միջամտությունը նկատելիորեն արգելակեց «քաոսի» տարածման քաղաքականությունը, որը, վերլուծաբանական հանրության (այդ թվում՝ արևմտյան) մի զգալի մասի համոզմամբ, նպատակաուղղված էր Ռուսաստանի և Չինաստանի «շրջակա միջավայրում» տուրբուլիզացված իրավիճակ ստեղծելուն: Որպես հիմք ընդունելով վերոնշյալ իրողությունը և հաշվի առնելով, որ «սառը պատերազմների» գլխավոր նպատակներից է հակառակորդի ընդհանրական ռեսուրսների նվազեցումը, տրամաբանական է դիտարկել այն վարկածը,

[*] «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

թե «ապրիլյան ավանտյուրան» գլոբալ հարթությունում լիովին համապատասխանում էր կամ, նվազագույնը՝ չէր հակասում Միացյալ Նահանգների ազգային շահերին: Հարավային Կովկասում Ռուսաստանի ներգրավումը ռազմական գործողություններին կնշանակեր «երրորդ ճակատ» բացել վերջինիս դեմ:

Այս ամենի առնչությամբ, հաշվի առնելով այն, որ հարձակումը ԼՂՀ-ի վրա սկսվել է Ի.Ալիևի՝ ԱՄՆ-ում գտնվելու պահին, որոշ մեկնաբաններ զուգահեռներ են տանում կատարվածի և 2008թ. օգոստոսին Հարավային Օսիայի դեմ ձեռնարկված ավանտյուրայի միջև, որին նախորդել էր ԱՄՆ պետքարտուղար Ք.Ռայսի և Մ.Սաակաշվիլու միջև տեղի ունեցած հեռախոսային խոսակցությունը: Այս համատեքստում ուշագրավ են նաև բրիտանացի Ռոբերտ Ուոլթերի հակաարցախյան նախաձեռնությունները ԵԽԽՎ-ում[1]:

Միևնույն ժամանակ, «քառօրյա պատերազմը» ձեռնտու էր նաև որոշ տարածաշրջանային մասշտաբի դերակատարների:

Տարածաշրջանային ռազմավարական հարթություն

Որպես «ապրիլյան ավանտյուրայի» համահեղինակ արդարացիորեն մատնանշվում է Թուրքիան, որն արցախյան իրադարձությունների համատեքստում իր «երկու պետություն՝ մեկ ազգ» կարգախոսին ավելացրել է նաև «մեկ բանակ» արտահայտությունը: Այս պետության դրդապատճառներն ավելի քան ակնհայտ են: Մեծ Մերձավոր Արևելքում քաոտիկ իրավիճակ ստեղծելու աշխարհաքաղաքական նախագծում Թուրքիան իր նեոօսմանյան դոկտրինի համատեքստում կարևոր դերակատարում ունի և, մինչ ռուսական միջամտությունը Սիրիայում, իրագործում էր բավական հաջող բազմապլան ռազմավարություն, որի բաղադրիչներն էին.

- Ռազմական քաղաքականությունը, որի նպատակն էր Ասադին տապալելը, Սիրիայի տարածքի մի մասի նկատմամբ վերահսկում սահմանելը, և արտահայտվում էր Սիրիայի օրինական իշխանությունների դեմ գործող «Իսլամական պետությանն» ու այլ ահաբեկչական կազմակերպություններին աջակցությամբ:

[1] *Հրայր Փաշայան, Լիանա Բալայան,* Ռոբերտ Ուոլթերի հակահայկական զեկույցը. հայացք Արցախից, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14554

- Տնտեսական քաղաքականությունը, որն արտահայտվում էր ոչ միայն *ԻՊ-ի* հետ նավթի առևտրով, այլև զինյալների կողմից թալանված պատմական մեծ արժեք ունեցող իրերի տարանցիկ առևտրով։
- Ներքին քաղաքականությունը, որի նպատակն էր վերջնական լուծում տալ «քրդական խնդրին»։

Վերոնշյալ դրդապատճառները կարող են լրացվել նաև մեկ այլ, ոչ ռացիոնալ հանգամանքով։ Դա Թուրքիայի ղեկավարների ավանդական ցեղասպանածին (գենոցիդոգեն), ապակառուցողական բնազդն է, որը մշտապես դրդել է նրանց իրագործել ցեղասպանություններ (հայեր, հույներ, ասորիներ) և վարել զավթիչ պատերազմներ (մասնավորապես, հիշենք Հյուսիսային Կիպրոսի օկուպացիան 1974թ.)։

Սիրիայում Ռուսաստանի միջամտության հետևանքով վերոնշյալ ծրագրերը հիմնականում ձախողվեցին, և արդյունքում՝ թուրքերը ստացան.

- ՌԴ-ի հետ ավելի քան լարված հարաբերություններ և այդ համատեքստում՝ տնտեսության անկում,
- ահաբեկչություններով ուղեկցվող քաղաքացիական պատերազմ երկրի ներսում,
- Սիրիան լքած և Թուրքիա վերադարձած, ագրեսիվ տրամադրված թուրք և այլազգի զինյալներ։

Այդպիսով ձախողվեց Թուրքիայի ոչ միայն տարածաշրջանային քաղաքականությունը, այլև ամբողջ նեոօսմանիզմի հայեցակարգը և գաղափարախոսությունը։ Ստեղծված ծանր իրավիճակում թուրքական կողմին ուղղակի անհրաժեշտ էր ռևանշի հաջող գործողություն, կամ, այլ խոսքերով՝ «փոքր հաղթական պատերազմ», որն ուղղված կլիներ նաև ՌԴ-ի դեմ, և այդ իսկ պատճառով նրանք չէին պախարակվի «միջազգային հանրության» կողմից։ Նման «ռևանշը» ձեռնտու էր իրագործել միջնորդված տարբերակով, առավել ևս, որ «արցախյան խնդրում» Ադրբեջանին պետք չէր երկար հորդորել՝ մանավանդ հաշվի առնելով Բաքվում ձևավորված «թուրքական լոբբին»՝ ի դեմս ՊՆ նախարար Զաքիր Հասանովի։

Տարածաշրջանային մարտավարական հարթություն

Ադրբեջանի պատրաստակամությունը՝ ռազմական գործողություններ սկսել Հայաստանի (ՀՀ և ԼՂՀ) դեմ, պայմանավորված էր մի քանի գործոններով: Արտաքին դրդապատճառներից պետք է կարևորել այն, որ Ադրբեջանը հանդիսանում է (իր հնարավորությունների սահմանում) Մերձավոր Արևելքում «քաոսի ձևավորման» լիարժեք «խաղացող»: Դա հիմնավորվում է ոչ միայն քաղաքական ոլորտում «ավագ եղբորն» աջակցություն ցուցաբերելու պարտավորությամբ կամ նրանով, որ այդ երկրի ղեկավարությունը բաժանում է «նեոօսմանիզմի» դոկտրինի դրույթները: Որոշ մերձավորարևելյան սցենարներում ենթադրվում էր Իրանի և Ռուսաստանի անհաջողությունը Սիրիայում ընթացող պատերազմում, ինչը կթուլացներ վերջիններիս դերակատարումը Հարավային Կովկասում: Ակնհայտ է, որ նման սցենարներն անմիջականորեն կհամընկնեին Ադրբեջանի շահերի հետ:

Նկատենք նաև, որ ինչպես Անկարան, այնպես էլ Բաքուն անմիջական կապեր էին հաստատել *ԻՊ*-ի հետ: Ինչպես հայտնի է, *ԻՊ*-ի համար զինյալների հավաքագրման խնդրով զբաղվում էր Ալիևի անձնական անվտանգության ծառայության պետի եղբայրը, որը համապատասխան ցանց էր ստեղծել նաև Ռուսաստանում: Հատկանշական է, որ ներկայում *ԻՊ*-ի կենդանի մնացած ադրբեջանցի զինյալները վերադառնում են Ադրբեջան, և դա, նավթի գների անկման հետ կապված տնտեսական բարդություններին զուգահեռ, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում երկրի ներսում:

Ի լրումն վերոնշյալ հանգամանքների, ներկայում աշխարհում ընթացող բավական բուռն իրադարձությունները կարծես թե հետին պլան էին մղել ԼՂՀ-ի հետ կապված խնդիրները: Հարցն անհրաժեշտ էր «վերակենդանացնել», և սա ևս մեկ լրացուցիչ հիմնավորում հանդիսացավ, որպեսզի որոշում ընդունվի ռազմական գործողություններ սկսելու վերաբերյալ:

Ռուսաստանի ռազմավարությունը

Ամփոփելով «ապրիլյան ավանտյուրայի» վերաբերյալ դիտարկումները՝ թերևս, անհրաժեշտ է խիստ համառոտ անդրադարձ կատարել նաև ՌԴ «հավասարակշռող» դիվանագիտությանը: Հարկ է նշել, որ եթե սպառազինությունների վաճառքը դաշնակից պետության հակառակորդին կարող է ունե-

նալ որոշակի տնտեսական պատճառաբանումներ, ապա դժվար է գտնել հիմնավորումներ ընդհանրական ռազմավարության համատեքստում: Չի կարելի բացառել, որ Մոսկվան որպես դրական նախադեպ ընկալում է 1918-1921թթ. վարած այն քաղաքականությունը, որի շնորհիվ կարողացավ իր վերահսկողության տակ դնել ողջ Հարավային Կովկասը: Այնինչ այսօր դրա համար չկա որևէ միավորող գաղափարախոսություն, ինչպիսին այն ժամանակ սոցիալիստականն էր: Իսկ կոնկրետ Ադրբեջանի համար ԵԱՏՄ-ին անդամակցությունն այնքան էլ գրավիչ հեռանկար չէ: Ի լրումն՝ նախորդ դարի սկզբին Ռուսաստանը գործ ուներ թուլացած Թուրքիայի հետ, որը նոր էր փորձում վերականգնվել Օսմանյան կայսրության փլուզումից հետո: Ներկայիս Թուրքիան և Ադրբեջանը միանգամայն այլ են, քան մեկ դար առաջ: Ի դեմս Ադրբեջանի Ռուսաստանն անգամ տնտեսական հարթությունում ունենալու է ոչ թե գործընկեր, այլ Թուրքիայի յուրահատուկ «ֆորպոստ» իր իսկ ճամբարում: Չէ՞ որ այսօր ՌԴ-Թուրքիա հարաբերությունները ենթարկվում են «աշխարհաքաղաքական անհամատեղելիության» տրամաբանությանը, ինչը պետք է հաշվի առնել Ադրբեջանին առնչվող բոլոր տիպի գործառույթներում: Անշուշտ, այս խնդրում կարևոր գործոն են հանդիսանում նաև ԵՏՄ և ՀԱՊԿ ձևաչափերում ՌԴ գործընկերների հայտնի կողմնորոշումները: Միևնույն ժամանակ, ձևավորվում է տպավորություն, թե միայն ավելի կոշտ քաղաքականությունը նույն Ադրբեջանի նկատմամբ կարող է հանգեցնել ավելի շոշափելի արդյունքների Ռուսաստանի ազգային շահերի տեսանկյունից:

ԻՊ-ԻՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՉՔՈՂԱՐԿՎԱԾ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան[*]

Նախորդ հոդվածում ԻՊ-ին Թուրքիայի աջակցությունը պայմանականորեն բաժանել էինք երկու մասի՝ քողարկված և չքողարկված օգնություն, և անդրադարձել էինք միայն Թուրքիայից Սիրիա ուղղությանն ու ԻՊ-ին Թուրքիայի քողարկված օգնությանը՝ բացառությամբ Սիրիայից Թուրքիա նավթի, բամբակի, անտիկ իրերի և այլնի մատակարարումների: Այս հոդվածում կանդրադառնանք այդ մատակարարումներին ու ԻՊ-ին Թուրքիայի չքողարկված օգնությանը:

Նավթի, բամբակի, անտիկ իրերի առևտուր – Թուրքական և միջազգային մամուլում բազմաթիվ հրապարակումներ են եղել Թուրքիայի՝ ԻՊ-ից նավթ գնելու և նման կերպ միջազգային ահաբեկչություն ֆինանսավորելու մասին: ԻՊ-ից Թուրքիայի նավթ գնելու խնդիրը մեծապես արդիականացավ 2015թ. նոյեմբերի 24-ին Թուրքիայի ռազմաօդային ուժերի կողմից ռուսական «Սու-24» մարտական ինքնաթիռը խոցելուց հետո: Դրան հաջորդած 2 ամսում Թուրքիային ԻՊ-ից նավթ գնելու համար մեղադրել է միանգամից 6 երկիր՝ Ռուսաստան, Սիրիա, Իրան, Իրաք, Իսրայել, Հունաստան:

Ռուսաստան - ԻՊ-ից Թուրքիայի նավթ գնելու մասին ռուսական կողմի հայտարարություններում նշվում էր, որ մի շարք թուրք պաշտոնյաներ ֆինանսական ուղիղ շահ ունեն ԻՊ նավթի մատակարարման համար (վարչապետ Դմիտրի Մեդվեդև), որ Թուրքիան սկսեց նյարդայնանալ այն բանից հետո, ինչ Ռուսաստանի օդատիեզերական ուժերը Սիրիայում սկսեցին ռմբակոծել ԻՊ նավթային առաջին քարավանները (արտգործնախարար Սերգեյ Լավրով), որ ԻՊ-ը Թուրքիային նավթ է մատակարարում արդյունաբերական ծավալով, և դժվար է հավատալ, թե Թուրքիայի բարձրագույն ղեկավարությունը տեղյակ չէ այդ մասին (նախագահ Վլադիմիր Պուտին), որ Ռուսաս-

[*] Թուրքագետ:

տանն ունի բոլոր հիմքերը՝ կարծելու, թե իր ինքնաթիռը խոցելու Թուրքիայի որոշումը թելադրված էր ԻՊ-ի՝ նավթը թուրքական նավահանգիստներ հասցնելու ուղիների անվտանգությունն ապահովելու ցանկությամբ, և որ թուրքմեններին պաշտպանելը միայն պատրվակ է (Պուտին), որ ԻՊ-ը Թուրքիայի տարածքով օրական փոխադրում է 200.000 բարել նավթ, որի վաճառքից ստացված եկամուտները գնում են ոչ միայն Թուրքիայի ղեկավարությանը հարստացնելուն, այլև զենքի ու զինյալների տեսքով Սիրիա վերադառնալուն (ՌԴ ԳՇ)։

Ի դեպ, Պուտինի մամլո քարտուղար Դմիտրի Պեսկովը, խոսելով նավթային բիզնեսի հանդեպ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանի ընտանիքի շահագրգռվածության մասին, ուշադրություն էր հրավիրել, որ Թուրքիայի նոր կառավարության կազմում էներգետիկայի նախարարի պաշտոնը զբաղեցրել է Էրդողանի փեսա Բերաթ Ալբայրաքը։ Իմիջիայլոց, Դավութօղլուն ցանկացել է այդ պաշտոնին վերադարձնել ավելի քան 6 տարի (2009-2015թթ.) էներգետիկայի նախարար հանդիսացած Թաներ Յըլդըզին, սակայն Էրդողանը պնդել է փեսայի թեկնածությունը։ Ուշագրավ է նաև, որ Թուրքիայի տրանսպորտի նախարարի պաշտոնում վերստին նշանակվեց Բինալի Յլդըրըմը, որն այդ պաշտոնում չնչին դադարներով գտնվել է 2002-2013թթ. և պաշտոնանկ էր արվել «Մեծ կաշառք» գործից հետո։

Ամփոփելով՝ կարելի է համաձայնել ռուսական կողմի պնդումների հետ, որ Թուրքիան խոցել է «Սու-24»-ը ԻՊ-ի հետ իր նավթային բիզնեսը պաշտպանելու համար, և որ Սիրիայի թուրքմեններին աջակցելը ծառայել է որպես պատրվակ՝ հաշվի առնելով, որ Թուրքիան ցայժմ թուրքմեններին «մարդասիրական օգնություն» ուղարկելու պատրվակով շարունակ զենք է ուղարկել Սիրիա, ինչը երևաց նաև Ադանայի նահանգում Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (*MIT*) բեռնատարների հայտնի գործով։ «Սու-24»-ը խոցվել է ԻՊ նավթը Թուրքիա հասցնելու արևմտյան երթուղու մոտ, և եթե արևելյան երթուղով (Իրաքյան Քրդստան) ԻՊ-ից նավթ ներկրող Թուրքիան կարողանում է «օրինականության երանգ» հաղորդել դրան՝ հայտարարելով, թե ներկրում է «քրդական» նավթ, ապա արևմտյան երթուղու (Ջեյհան) հարցում Թուրքիան ունակ չէ տալ խելամիտ բացատրություն։ Եվ պատահական չէր, որ ՌԴ ՊՆ-ի կողմից ԻՊ նավթը Թուրքիա հասցնելու երթուղիները հրապարակելուց հետո Իրաքի քրդերը հերքեցին, թե ներգրավված են ԻՊ

նավթը Թուրքիա փոխադրելու գործընթացում: Ընդ որում՝ թուրքական *BOTAŞ* պետական ընկերության տվյալներով՝ 2015թ. մոտ քառակի ավելացել է Իրաքից նավթի ներկրման ծավալը (48.6 միլիոնից մինչև 192.4 միլիոն բարել)[1]:

Իրան – Իրանական կողմի հայտարարություններում նշվել է, որ երկրի հետախուզությունը լուսանկարել է բոլոր այն երթուղիները, որոնցով ԻՊ-ը նավթ է մատակարարում Թուրքիային, և որ Իրանը պատրաստ է դրանք ներկայացնել Թուրքիայի կառավարությանը (Նպատակահարմարության խորհրդի քարտուղար Մոհսեն Ռեզաի), որ Թուրքիան խոցել է Էրդողանի որդու նավթային բիզնեսին սպառնացած ռուսական «Սու-24»-ը, որ թուրքական բանակը սպասարկում է ոչ թե թուրք ժողովրդի, այլ նախագահի անձնական շահերը (Իրանի խորհրդարանի՝ ազգային անվտանգության ու արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովի անդամ Նազար Շարիֆ), որ ԻՊ-ն օրական 800.000 բարել նավթ կես գնով վաճառում է Թուրքիային, ինչի համար էլ նա նվազեցրել է Իրանից նավթամթերքների ներկրումը (Իրանի նավթի, գազի ու նավթամթերքի արտահանողների միության նախագահ Հասան Տաջիկ): Իրանական կողմի այս հայտարարություններն էլ ավելի սրեցին Թուրքիայի հետ հարաբերությունները:

Սիրիա – Սիրիական կողմի հայտարարություններում նշվում էր, որ Թուրքիան «Սու-24»-ը խոցել է ի պատասխան ռուսական ավիացիայի կողմից Էրդողանի որդու *BMZ Group* ծովային տրանսպորտային ընկերությանը նավթ մատակարարող հարյուրավոր բեռնատարների ոչնչացման (տեղեկատվության նախարար Օմրան ազ-Զոուբի), որ 5 տարի առաջ Սիրիայում արդյունահանվում էր մոտ 400.000 բարել նավթ, որի մի մասն արտահանվում էր, իսկ այժմ այդ նավթը հափշտակված է ԻՊ-ի կողմից և ուղարկվում է Թուրքիա (արտգործնախարար Վալիդ Մուալեմ): Նշենք, որ առաջին դեպքը չէ, երբ Թուրքիան սիրիական ճգնաժամի ժամանակ մեղադրվել է Սիրիան թալանելու համար. 2013թ. հունվարին Սիրիայի ԱԳՆ-ն հայտնեց, որ Հալեպի նահանգում թալանվել է ավելի քան 1000 գործարան, որոնց սարքավորումներն ուղարկվել են Թուրքիա: Սիրիայի ԱԳՆ-ն դա որակեց ծովահենություն և տվյալ հարցով դիմեց ՄԱԿ գլխավոր քարտուղարին ու ՄԱԿ ԱԽ ղեկավա-

[1] Irak'tan Türkiye'ye petrol sevkiyatında rekor artış, Vatan, 26.01.2016.

րին՝ խնդրելով Թուրքիային ստիպել վերադարձնել գողացվածը, փոխհատուցել պատճառված վնասն ու պատժել մեղավորներին[2]:

Այն ժամանակ թուրքական մամուլը գրեց, թե Սիրիայի տնտեսական մայրաքաղաք Հալեպի գործարանների թալանն իրականացվել է Էրդողանի հրամանով, ով դրանով ցանկացել է ծնկի բերել Սիրիայի տնտեսությունը և հատկապես ձերբազատվել Թուրքիայի համար արդյունաբերական մրցակցային մի շարք ոլորտներից՝ մանվածքի, տեքստիլ, սննդի, բժշկական պարագաների և ցեմենտի գործարաններից: Տնտեսագետ Հայան Սուլեյմանի խոսքերով՝ դա Սիրիայի պատմության մեջ ակնհայտ հափշտակության երկրորդ դեպքն էր. առաջին դեպքը գրանցվել է 1865թ., երբ Օսմանյան կայսրությունը տարբեր մասնագիտություններով խմբերին, արհեստավորներին տեղափոխեց Ստամբուլ[3]:

Իրաք – Իրաքյան կողմի հայտարարություններում շեշտադրվում էր, որ ԻՊ-ը վերջին 8 ամսում Թուրքիայի «սև շուկայում» վաճառել է $800 մլն-ի նավթ, և որ նավթի առևտուրն ԻՊ-ի համար թթվածնի նման բան է, որը կտրելու դեպքում ԻՊ-ը կխեղդվի (ազգային անվտանգության հարցերով նախկին խորհրդական Մուվաֆաք ալ-Ռուբաի), ԻՊ նավթի մեծ մասն իրացվում է Թուրքիայով, և անհրաժեշտ է վերջ դնել նավթի մաքսանենգությանը (վարչապետ Հայդար ալ-Աբադի): Ուշագրավ է, որ Աբադիի հայտարարությունից օրեր առաջ (04.12.2015) Թուրքիան տանկային գումարտակ էր տեղակայել Մոսուլի մոտ, ինչն Իրաքը դիտարկեց ներխուժում և պահանջեց դուրս բերել այն:

Հունաստան, Իսրայել – 2016թ. հունվարի վերջերին Հունաստանի պաշտպանության նախարար Պանոս Կամենոսն Աթենքում Իսրայելի պաշտպանության նախարար Մոշե Յաալոնի հետ բանակցությունների արդյունքներով հայտարարեց, որ ԻՊ նավթի մեծ մասն անցնում է Թուրքիայով, որն այդպիսով ֆինանսավորում է ահաբեկչությանը, և լավ կլիներ, եթե Թուրքիան փոխեր իր պահվածքն ու չհամագործակցեր ահաբեկիչների հետ: Պետք է նշել, որ Հունաստանը շարունակ դժգոհում է Թուրքիայի կողմից Կիպրոսը չճանաչելուց, Միջերկրական ծովի արևելքի էներգակիրների հարցում նրա քայլերից, թուրքական մարտական ինքնաթիռների կողմից իր օդային սահ-

[2] 'Bin fabrika Türkiye'ye kaçırıldı', Cumhuriyet, 11.01.2013.
[3] Halep'teki fabrikaları çalıp İstanbul'da hurdaya satmışlar, Aydınlık, 28.04.2013.

մանը բազմիցս խախտելուց, իսկ վերջին շրջանում այդ ամենին գումարվել էր նաև Թուրքիայից Հունաստան փախստականների մեծ հոսք ուղղելը:

Մոշե Յաալոնն, իր հերթին, հայտարարեց, որ ԻՊ-ն արդեն երկար ժամանակ է, ինչ նավթի արտահանման համար գումար է ստանում Թուրքիայից, և հույս հայտնեց, որ վերջ կտրվի դրան: Ուշագրավ է, որ Յաալոնն այս հայտարարությունն արել է թուրք-իսրայելական հարաբերությունների կարգավորման փորձերի ֆոնին: Ամեն դեպքում Յաալոնի այդ հայտարարությունը կարելի է անակնկալ համարել մասնակիորեն՝ հաշվի առնելով, որ նա «Մավի Մարմարայի» միջադեպից հետո կտրուկ դեմ է արտահայտվել Թուրքիայից ներողություն խնդրելուն (նա հայտարարել էր, որ եթե իրենք ներողություն խնդրեն, ապա Էրդողանն անգամ դրանից հետո հանգիստ չի թողնի Իսրայելին): Թուրքական մամուլում հրապարակումներ են եղել նաև Իսրայելի կողմից ԻՊ նավթը գնելու մասին, և Յաալոնի հայտարարությունը կարող է կապված լինել նաև այդ մեղադրանքներն Իսրայելից հեռացնելու փորձի հետ: Բացի այդ, դրանից մոտ մեկ շաբաթ առաջ Իսրայելի արդարադատության նախարար Աելյեթ Շակեդը միջազգային հանրությանը կոչ էր արել ճանաչել Թուրքիային և Իրաքին սահմանակից տարածքում պետություն ունենալու քրդերի իրավունքը[4]: Իսկ Յաալոնի հայտարարությունից գրեթե անմիջապես հետո հաղորդվեց, որ Իսրայելը, Հունաստանն ու Կիպրոսը ծրագրել են կառուցել գազատար, որը միմյանց կկապի այդ երկրները, և կիպրական ու իսրայելական գազը կհասցնի Եվրոպա[5]: Դա նշանակում է, որ Թուրքիան, որը նախկինում շարունակ հայտարարում էր, թե կիպրական և իսրայելական գազը Եվրոպա հասցնելու ամենակարճ երթուղին անցնում է իր տարածքով, հայտնվում է «խաղից դուրս» վիճակում: Իսրայելի այս քայլերը լուրջ ճնշում են հանդիսանում ներկայումս նրա հետ բանակցող Թուրքիայի վրա:

Թուրքիան ԻՊ-ից գնում է նաև մեծ քանակությամբ բամբակ: 2015թ. վերջին հաղորդվեց, որ Թուրքիան երկու շաբաթում ԻՊ-ից գնել է 25.000 տոննա բամբակ, ինչը ռեկորդային ցուցանիշ է (Թուրքիայում բամբակի տարեկան սպառումը կազմում է 1.4 մլն տոննա): Թուրքիայի ամենամեծ տեքստիլ կենտրոններից մեկն էլ գտնվում է Սիրիային մոտ գտնվող Գազիանթեփում, որի ձեռնարկությունները շատ էժան գնում են ԻՊ բամբակը[6]: Բամբակի միջազգա-

[4] İsrail Adalet Bakanı: Kürt devleti kurulmasını destekleyelim, NTV, 20.01.2016.
[5] Yunanistan, İsrail ve Rumlar anlaştı, Yeni Mesaj, 29.01.2016.
[6] Türkiye, IŞİD'den rekor düzeyde pamuk alıyor! Sevkiyat Kilis'ten yapılıyor, Meydan, 14.12.2015.

յին խորհրդակցական կոմիտեի տվյալներով՝ պատերազմից առաջ Սիրիան տարեկան արտահանում էր 600.000 տոննա բամբակ, ինչը 2014թ. նվազել է մինչև 70.000 տոննայի, և որ Թուրքիան իր բամբակի կարիքների 5%-ը բավարարում է Սիրիայից: ԻՊ-ը Թուրքիայի միջոցով իր բամբակը վաճառում է նաև այլ երկրների (Ռաքքային ու Դեյր էզ Զորին բաժին է ընկնում Սիրիայի բամբակի դաշտերի 1/3-ը)[7]: Բացի այդ, ԻՊ-ը Թուրքիայի տարածքով վաճառում է նաև անտիկ իրեր, պատմամշակութային արժեքներ: ԱՄՆ միջազգային առևտրային հանձնաժողովի տվյալներով՝ ԻՊ-ը Թուրքիայի միջոցով միայն Ամերիկային վաճառել է ավելի քան $35 մլն-ի պատմամշակութային արժեքներ: ԻՊ-ի կողմից անտիկ իրերի վաճառքի կազմակերպման հարցում առանցքային երկրներ են համարվում Թուրքիան և Լիբանանը[8]:

Չքողարկված աջակցություն - 2014թ. հունվարին Սիրիայի քրդերը հայտարարեցին երկրի տարածքում ինքնավար 3 կանտոնի (շրջան) ստեղծման մասին՝ շեշտադրելով, որ դրանք Սիրիայի տարածքի մի մասն են: Խոսքը Թուրքիային սահմանակից Ջիզրեի (արևելք), Քոբանիի (կենտրոն) և Աֆրինի (արևմուտք) կանտոնների մասին է[9]: Դա հարուցեց Թուրքիայի մտահոգությունը, որի համար Սիրիական հակամարտության մեկնարկից հետո գերխնդիր է եղել Սիրիայի քրդերի հնարավոր անջատողական շարժումները կանխելը, որպեսզի նրանք Հյուսիսային Իրաքի նման չստանան ինքնավարություն, և որպեսզի կանխվի Սիրիայի, Իրաքի ու հենց Թուրքիայի քրդերի միավորումը:

Թուրքիան շարունակ բարձրաձայնում էր Սիրիայի հյուսիսում անվտանգության և թռիչքազերծ գոտու ստեղծման «անհրաժեշտության» մասին՝ դա պատճառաբանելով փախստականների մեծ ներհոսքով: Սակայն իրականում Թուրքիան դրանով իսկ ցանկանում էր սեպ խրել քրդերի միջև (Քամըշլլի շրջանում), կանխել նրանց միավորումը, ինչպես նաև ռազմական ներկայություն հաստատել Սիրիայի հյուսիսում: Տեսնելով, որ այդ հարցում աջակցություն չի ստանում իր արևմտյան դաշնակիցներից, Թուրքիան սկսեց ուժգնորեն աջակցել ԻՊ-ին, որը Սիրիայում սկսեց զբաղվել նաև տեղի քրդերի հարցի լուծմամբ: Թուրքիայի այդ պահվածքն ակնառու էր Քոբանիի պաշտ-

[7] 'IŞİD Türkiye üzerinden pamuk satıyor' iddiası, BBC Türkçe, 11.09.2015.
[8] Pelin Ünker, IŞİD, Türkiye üzerinden Amerika'ya antika satıyor, Cumhuriyet, 06.12.2015.
[9] Kürtler bugün Rojava'da özerklik ilan etti, Radikal, 21.01.2014.

պանության ժամանակ, երբ նա թույլ չտվեց, որ երկրում ապրող քրդերն օգնության հասնեն Քոբանիի պաշտպաններին: Դրա հետ կապված՝ Թուրքիայում քրդերն անցկացրին բողոքի զանգվածային ակցիաներ, որոնց ժամանակ զոհվեցին տասնյակ անձինք: Թուրքիան ԱՄՆ ճնշման ներքո համաձայնեց իր տարածքով Քոբանիի պաշտպաններին Իրաքի քրդերի ուժերի (Փեշմերգա) օգնության հասնելուն, սակայն, դրա հետ մեկտեղ, նվազեցրեց նրանց քանակը և ձգձգեց տվյալ գործընթացը[10]: Այնուամենայնիվ, ԻՊ-ին չհաջողվեց գրավել Քոբանին:

Որքան աճում էին Սիրիայի քրդերի ռազմական հաջողությունները, այնքան մեծանում էր ԻՊ-ին Թուրքիայի չքողարկված աջակցությունը: 2015թ. գարնանը Սիրիայի քրդերի ուժերը (*YPG/YPJ*) Քոբանիի համար մոտ 4-ամսյա մարտերից հետո հասան Եփրատ գետին, իսկ ԻՊ զինյալները քաշվեցին Եփրատից արևմուտք[11]: Արդեն 2015թ. հունիսի կեսին *YPG*-ը գրավեց Թել Աբյադը, որը սեպի նման խրված էր Քոբանիի և Ջիզրեի միջև և այդպիսով, Սիրիայի հյուսիսում՝ Իրաքի սահմանից մինչև Եփրատ գետն ընկած տարածքը, հայտնվեց Սիրիայի քրդերի ձեռքում: Դա էլ ավելի հարուցեց Թուրքիայի զայրույթը, ինչն ունի մի քանի պատճառ. 1. Թուրքիային սարսափեցնում է այն, որ նրա խոշորագույն հարևան են դարձել Սիրիայի քրդերը, Թել Աբյադի գրավմամբ միավորվեցին Ջիզրեի ու Քոբանիի շրջանները՝ ապահովելով լոգիստիկ կապ, 2. Թել Աբյադի գրավմամբ կտրվեց Թուրքիայի և ԻՊ-ի միջև կապը տվյալ հատվածում, որտեղ գտնվում է Աքչաքալեի սահմանային անցակետը, որով ԻՊ-ը համալրումներ է ստացել Թուրքիայից, իսկ Թուրքիան նրանից ստացել է էժան նավթ, 3. հնարավորություն ստեղծվեց, որ Սիրիայի քրդերը զարգացնեն իրենց հաջողությունը դեպի Եփրատի արևմտյան ափ, փորձեն միավորել իրենց վերջին կանտոն Աֆրինը, 4. Թուրքիային մտահոգում է Սիրիայի հյուսիսում ժողովրդագրական պատկերի փոփոխումը (Էրդողանը վրդովմունք հայտնեց Թել Աբյադի գրավման համար՝ ընդգծելով, որ նրա բնակչության 95%-ը կազմում են արաբներն ու թուրքմենները, իսկ քրդերը կազմում են միայն 5%-ը):

Դրա համար էլ զարմանալի չէ, որ Թուրքիան փորձել է ամեն կերպ խոչընդոտել Սիրիայի քրդերի կողմից Թել Աբյադի գրավմանը: Հետագայում

[10] Peşmerge sayısı 150'ye indirildi, Anadolu Ajansı, 24.10.2014.
[11] Kürt Güçleri Kobani Batısında Fırat Nehrine Ulaştı, URFAHABERCİSİ, 07.03.2015.

YPG-ը քանիցս հայտնեց, թե Թուրքիան Թել Աբյադի հատվածում հարվածել է իր դիրքերին: 2015թ. հունիսի վերջին ԻՊ զինյալներն անսպասելիորեն 3 կողմից հարձակվեցին Քոբանիի վրա և մարտեր ծավալեցին քաղաքում, բայց վերստին ձախողվեցին[12]: Այստեղ շատերին սկսեց հուզել այն հարցը, թե ինչպես է նրանց հաջողվել հասնել Քոբանի: Անմիջապես լուրեր տարածվեցին, թե ԻՊ զինյալները Քոբանիում հայտնվել են Թուրքիայի տարածքից: Թուրքիայի ԱԳՆ խոսնակ Թանժու Բիլգիչը հերքեց դա, իսկ Սիրիային սահմանակից Թուրքիայի Շանլըուրֆա նահանգի Սուրուչ շրջանի ղեկավար Աբդուլա Չիֆթչին հայտարարեց, թե ԻՊ զինյալները Քոբանիում հայտնվել են Եփրատի արևմտյան ափին ընկած Ջերաբլուս քաղաքից[13]:

Սակայն Սիրիայի քրդերի Դեմոկրատական միություն կուսակցության (*PYD*) համանախագահ Սալիհ Մուսլիմը դա բացառեց երկու պատճառով: Նա նշեց, որ ԻՊ զինյալները դրա համար նախ պետք է հաղթահարեին Եփրատի խոչընդոտը, և բացի այդ՝ կոտրեին Եփրատի արևելյան ափին գտնվող *YPG* դիմադրությունը (Քոբանիի վրա ԻՊ առաջին հարձակման ժամանակ Մուսլիմը Թուրքիային մեղադրել էր ԻՊ-ի հետ համագործակցելու համար)[14]: Թել Աբյադի անկումից և Քոբանիի դեմ նոր հարձակման ձախողումից օրեր անց Թուրքիայում գումարվում է Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստ, որում որոշվում է Սիրիայի քրդերի համար «կարմիր գիծ» սահմանել Եփրատի արևմտյան ափը, որի համար պատճառ է բերվում այն, որ Ջերաբլուսի ուղղությամբ Սիրիայի քրդերի վրա հարձակման դեպքում կմեծանա փախստականների ալիքը[15]: Հետաքրքիր է, թե ինչու Թուրքիան նույնպիսի զգուշացում չէր արել (և ամենակարևորը՝ չէր հարվածել) ԻՊ-ին Քոբանիի վրա նրա հարձակվելուց առաջ, ինչի հետևանքով Քոբանիից Թուրքիա զաղթեց ավելի քան 130.000 մարդ[16]: 2015թ. հոկտեմբերի վերջին, երբ *YPG*-ը երկու նավակով փորձել է անցնել Եփրատի արևմտյան ափը, Թուրքիայի F-16 ինքնաթիռները հարվածել են նրան[17]: Չի բացառվում, որ *YPG*-ն այդ կերպ փորձել է ստուգել Թուրքիայի վճռականության աստիճանը՝ հաշվի առնելով, որ Եփ-

[12] IŞİD Kobani'ye saldırdı!, Milliyet, 25.06.2015.
[13] IŞİD üyeleri Türkiye'den mi sızdı?, Gerçek Gündem, 25.06.2015.
[14] PYD'den Kobani saldırısı açıklaması!, Vatan, 25.06.2015.
[15] Yeni iddia: Suriye'de 'Kırmızı çizgi' artık Fırat'ın batısı…, Taraf, 01.07.2015.
[16] Kobani'den Türkiye'ye girenlerin sayısı 130 bini aştı,T24, 22.09.2014.
[17] Türkiye PYD'yi Fırat'ta vurdu, Sabah, 25.10.2015.

րատի գետանցման փորձը կատարվել է միայն երկու նավակով: Թուրքական մամուլն ընդգծեց, որ դա Սիրիական հակամարտության ընթացքում Թուրքիայի կողմից *YPG*-ին հարվածելու առաջին դեպքն է: 2015թ. աշնանը Էրդողանը մի քանի անգամ հայտարարեց, որ իրենք վճռական են տրամադրված և թույլ չեն տա, որ Սիրիայի քրդերն անցնեն Եփրատի արևմտյան ափը[18]:

Թուրքիայի իշխանությունների այդ դիրքորոշման դրդապատճառները հասկանալի են. 1. նրանք առաջին հերթին ձգտում են այդպիսով կանխել *YPG* հաղթարշավը դեպի Աֆրին և Սիրիայի հյուսիսում քրդական ինքնավար բոլոր կանտոնների միավորումը, թեև Աֆրինի մոտ գտնվող մի փոքր տարածք գտնվում է այլ ուժերի վերահսկողության ներքո (թուրքական մամուլն անգամ չի բացառել, որ *YPG* հաջորդ քայլը կարող է լինել մինչև Լաթաքիա (Միջերկրական ծով) հասնելը), 2. Թուրքիան այդպիսով կզրկվի ԻՊ-ին սահմանակից լինելուց, նրան օժանդակելուց, նրանից նավթ գնելուց և այլն, 3. Ջերաբլուս-Ազեզ հատվածին *YPG*-ի տիրելու դեպքում թուրք-սիրիական գրեթե ողջ սահմանին կհաստատվի կայունություն, և Թուրքիան կզրկվի Սիրիայի դեպքերից դժգոհելու, իր տարածքին սպառնացող վտանգների մասին ահազանգելու հնարավորությունից, 4. Թուրքիան նաև կզրկվի ահաբեկչական խմբավորման (ԻՊ) դեմ պայքարի պատրվակով ցամաքային ռազմական գործողություն ձեռնարկելու, Ջերաբլուս-Ազեզ հատվածում անվտանգության գոտի ձևավորելու հնարավորությունից, 5. Թուրքիան կզրկվի Սիրիայի հարցում լուրջ դերակատարում ունենալու հնարավորությունից՝ սահմանի գրեթե ողջ երկայնքով դեմ առնելով քրդական պատնեշին (քրդական միջանցք), 6. Թուրքիան ԻՊ-ին հնարավորություն ու ժամանակ ընձեռեց՝ համալրումներ ստանալու և Ջերաբլուսում ամրություններ կառուցելու համար, 7. Թուրքիան փորձում է կանխել ժողովրդագրական պատկերի փոփոխումը (թուրքական մամուլի հաղորդմամբ՝ Ջերաբլուսից Ազեզ ընկած տարածքի բնակչության 75%-ը կազմում են արաբները, իսկ 15%-ը՝ թուրքմենները), 8. և վերջապես, թուրքական մամուլը չէր բացառել, որ Ջերաբլուս-Ազեզ գոտին անցնելու է Թուրքիային՝ դառնալով նրա 82-րդ նահանգը[19]:

Այն բանից հետո, երբ Թուրքիան տեսավ, որ ԻՊ-ը սկսել է պարտություններ կրել և այլևս ունակ չէ զբաղվել «Քրդական հարցի» լուծմամբ, նա

[18] Erdoğan: Kimse Fırat'ın batısına geçemez, çok kararlıyız, T24, 10.11.2015
[19] O topraklar Türkiye'nin olacak, Akşam, 05.08.2015

սկսեց ավելի մերձենալ ԱՄՆ-ի հետ: Դրանում իր էական դերն ուներ նաև այն, որ երբ ԱՄՆ-ը ժամանակին Թուրքիային կոչ էր անում ակտիվորեն ներգրավվել ԻՊ-ի դեմ պայքարում, Թուրքիան չընդառաջեց նրան, ինչն էլ հանգեցրեց նրան, որ ԱՄՆ-ը սկսեց ավելի շատ հենվել Սիրիայի քրդերի վրա: Թուրքիայում փորձեցին հետ բերել կորցրածը: Թել Աբյադի գրավումից մոտ մեկ ամիս անց՝ հուլիսի վերջին, Թուրքիան ԱՄՆ-ին թույլատրեց ԻՊ-ի դեմ պայքարում օգտվել Ինջիրլիքի ավիաբազայից, ինչին ընդդիմանում էր երկար ժամանակ՝ առաջ քաշելով մի շարք պահանջներ (որոնք առնչվում էին Սիրիայի քրդերին, Բաշար Ասադին, անվտանգության գոտուն)[20], իսկ արդեն օգոստոսի վերջին Թուրքիայի մարտական ինքնաթիռներն առաջին անգամ ԱՄՆ գլխավորած դաշինքի հետ համատեղ Սիրիայում հարվածեցին ԻՊ օբյեկտներին[21]: Եթե Պարսից ծոցի շրջանում գտնվող ամերիկյան կործանիչները Սիրիայում ԻՊ դիրքերին հարվածելու համար պետք է հաղթահարեին 1000 մղոն (1609 կմ), ապա Ինջիրլիքի ավիաբազայից օգտվելու դեպքում դա կազմում էր 250 մղոն (մոտ 400 կմ): Այդ առումով կարելի է հիշատակել նաև, որ 2015թ. նոյեմբերին Թուրքիան հրաժարվեց զենիթահրթիռային հեռահար համալիրներ գնել ամերիկյան պատժամիջոցների ներքո գտնվող չինական *CPMIEC* ընկերությունից, որը Թուրքիայի անցկացրած համապատասխան մրցույթի արդյունքներով հաղթել էր դեռևս 2013թ. աշնանը, ինչը հարուցել էր ԱՄՆ խոր դժգոհությունը:

Չնայած Թուրքիայի ուշացած այդ քայլերին՝ ԱՄՆ-ը շարունակեց աջակցել ԻՊ-ի դեմ պայքարում ազդեցիկ ուժ համարվող *YPG*-ին: Եվ երբ ԱՄՆ-ը 2015թ. հոկտեմբերի 11-ին 50 տոննա զինամթերք օդից նետեց Սիրիայի հյուսիսում ԻՊ-ի դեմ պայքարող ուժերին, այդ թվում նաև Սիրիայի քրդերին, թուրքական մամուլը դա համարեց շոկային՝ նշելով, որ Պենտագոնն առաջին անգամ պաշտոնապես հայտարարում է Սիրիայի քրդերին ռազմական օգնություն ցուցաբերելու մասին[22], իսկ Անկարայում ԱՄՆ դեսպան Ջոն Բասը պարզաբանումներ տալու նպատակով կանչվեց Թուրքիայի ԱԳՆ[23]: Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուն հայտարարեց, որ եթե Սիրիայի քրդերին հասցված զենքը հետագայում ուղղվի Թուրքիայի դեմ, ապա իրենք կհարվա-

[20] Türkiye ve ABD, İncirlik Üssü'nün kullanımı için anlaştı iddiası, Radikal, 23.07.2015.
[21] Türk Savaş Uçakları IŞİD'i Vurdu, Mynet Haber, 29.08.2015.
[22] ABD bunu ilk kez açıkladı!, Internet Haber, 17.09.2015.
[23] ABD ve Rus Büyükelçileri Dışişleri Bakanlığı'na çağrıldı, Haber Turk, 14.10.2015.

ծեն և կոչնչացնեն այդ զենքը[24]: Նոյեմբերի կեսին ԱՄՆ-ը երկրորդ անգամ 50 տոննա զենք ու զինամթերք հասցրեց նույն ուժերին՝ ներառյալ Սիրիայի քրդերը: Այս անգամ այն ուղարկվեց ոչ թե օդից, այլ ցամաքով: Թուրքական մամուլն այդ կապակցությամբ գրեց, որ չնայած Թուրքիայի զգուշացմանը՝ ԱՄՆ-ը երկրորդ անգամ Սիրիայի քրդերին օգնեց զենքով և չսեղմեց Թուրքիայի պարզած ձեռքը[25]: Փաստորեն, Թուրքիան ակնհայտորեն փորձում էր կանխել ԻՊ-ի դեմ պայքարող ուժերի զորեղացումը և միաժամանակ խոչընդոտում էր ԻՊ-ին ծնկի բերելուն:

Նույնը կարելի է ասել նաև Ռուսաստանի պարագայում, որի դեսպան Անդրեյ Կարլովը 2015թ. աշնանը կանչվեց Թուրքիայի ԱԳՆ, որտեղ զգուշացրին *PYD*-ին զենք մատակարարելու անթույլատրելիության մասին: ՌԴ ԱԳՆ-ն, սակայն, հերքեց *PYD*-ին զենք մատակարարելու մասին լուրերը: Երբ 2015թ. հոկտեմբերին ներկայացուցչություն բացելու համար Մոսկվա մեկնեց *PYD* պատվիրակությունը, Էրդողանը հեռախոսազրույց ունեցավ Պուտինի հետ և կոչ արեց գործ չբռնել *PYD*-ի հետ՝ զգուշացնելով, որ իրենք *PYD*-ին համարում են ահաբեկչական կազմակերպություն, և որ նրա հետ գործ բռնելը կնշանակի Թուրքիայի հանդեպ թշնամական դիրքորոշում[26]: 2015թ. աշնանը Սիրիայում ռուսական ռազմական կամպանիայի մեկնարկը և հատկապես ռուս-թուրքական հարաբերությունների սրացումը Թուրքիայի համար էլ ավելի բարդացրին Սիրիայի քրդերին զսպելու գործը, քանի որ Սիրիայի քրդերին Ռուսաստանի աջակցությունը դարձավ ավելի ուժգին՝ դրսևորվելով նաև ավիաաջակցության և զենքի մատակարարումների տեսքով: Թուրքիան արդեն անցավ բացահայտ գործողությունների և 2016թ. սկսեց հրետակոծել ու հրթիռակոծել[27] Սիրիայի քրդերին, որոնք նրա համար, թերևս, անսպասելիորեն սկսեցին հարվածել ոչ թե Ջերաբլուսի, այլ Ազեզի շրջանում, որը կապող օղակ էր Թուրքիայի և Հալեպի միջև: *YPG*-ը չէր պատասխանում Թուրքիային, որպեսզի արհեստական հիմք չստեղծի Սիրիայում Թուրքիայի ռազմական միջամտության համար: Բացի այդ, *PKK* առաջնորդներից Մուրադ Քարայըլանը հայտարարեց, որ սահմանի այն կողմում (Թուրքիայում) բնակվում են քրդերը, ինչը զսպիչ գործոն է:

[24] ABD ile 'PYD'ye silah' krizi, Hürriyet, 14.10.2015.
[25] ABD'den Türkiye'ye Rağmen Suriye'ye İkinci Silah Yardımı, Son dakika, 16.11.2015.
[26] PYD ile iş tutmayın, Sabah, 22.10.2015.
[27] YPG ilk kez füzelerle vuruldu!, Haber7, 19.02.2016.

2016թ. մարտին Սիրիայի քրդերը հայտարարեցին Հյուսիսային Սիրիայի Դաշնություն հիմնելու մասին, ինչը դատապարտվեց Թուրքիայի, ինչպես նաև Սիրիայի իշխանությունների կողմից[28]: Ինչպես տեսնում ենք, այս հարցում համընկնում են այդ երկու երկրների շահերը, և պատահական չէ, որ Թուրքիան մշտապես հայտարարում է Սիրիայի տարածքային ամբողջականությանն աջակցելու մասին՝ վախենալով տեղի քրդերի ինքնավարությունից ու անկախությունից:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Թուրքիան ոչ միայն պարզապես գաղտնի աջակցել է ԻՊ-ին, այլև բացահայտորեն հանդես է եկել ԻՊ-ի դեմ պայքարող ուժերի և հատկապես Սիրիայի քրդերի դեմ՝ նրանց զորեղացումը թույլ չտալու և ԻՊ վախճանը չմոտեցնելու համար: Սիրիայի քրդերին ԻՊ-ի միջոցով ծնկի բերելու Թուրքիայի խաղադրույքը չաշխատեց: Ավելին, տեղի ունեցավ հակառակը, և իր արևմտյան դաշնակիցներից հիասթափված Թուրքիան սկսեց հույսն ամբողջովին դնել իր իսկ ուժի վրա: Թեև Էրդողանը հայտարարում էր, թե իրենք թույլ չեն տա հարավային սահմանին (Սիրիայի հյուսիսում) «Նոր Ղանդիլի» առաջացում, այնուամենայնիվ, թուրքական մամուլը գրել է, որ այն արդեն ստեղծվել է[29]: Ջերաբլուս-Ազեզ գոտին Թուրքիայի համար «վերջին հույսն» է, և նա ամբողջովին կառչելու է դրանից: Հենց դրա համար էլ Թուրքիան համառորեն հրաժարվում է փակել Սիրիայի հետ սահմանային այդ գոտին՝ չնայած ԱՄՆ համառ պահանջներին: Այն, որ Ջերաբլուս-Ազեզ գոտին դեռ գրեթե ամբողջովին գտնվում է ԻՊ վերահսկողության տակ, բացառապես Թուրքիայի շնորհիվ է, որը մարտական ինքնաթիռներով, հրետանային և հրթիռային համալիրներով հարվածել է Սիրիայի քրդերին՝ այդպիսով մեծ ծառայություն մատուցելով ԻՊ-ին, ինչպես նաև կոպտորեն միջամտելով հարևան երկրի ներքին գործերին:

[28] Kürtler Suriye'de 'federasyon' ilan etti, Cumhuriyet, 17.03.2016.
[29] Suriye'nin kuzeyi yeni 'Kandil' oldu, Posta, 18.03.2016.

ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. մարտ

Հայկ Գաբրիելյան[*]

Թուրքիա-Ռուսաստան - Մարտին Թուրքիայի էկոնոմիկայի նախարար Մուսթաֆա Էլիթաշը հայտարարեց, որ Անկարան գործադրում է բոլոր ջանքերը Մոսկվայի հետ հարաբերությունները շուտափույթ կարգավորելու համար, սակայն պատասխան քայլեր դեռ չկան: Ավելին, «Ռոսսելխոզնադզոր»-ը մարտի կեսերից ժամանակավորապես սահմանափակեց Թուրքիայից պղպեղի և նռան ներկրումը: Սահմանափակումը կապված է Ռուսաստանին պարբերաբար վարակված արտադրանք մատակարարելու հետ: Բացի այդ, Ռուսաստանը կարող է մեկ ամսվա ընթացքում արգելել Թուրքիայից բուսական ծագում ունեցող ողջ սննդամթերքի ներկրումը, եթե դրա շուրջ բանակցությունները ավարտվեն անարդյունք:

Մարտին հայտնի դարձավ, որ թուրքական մասնավոր գազային ընկերությունները մտադիր են միջազգային միջնորդ դատարանում վիճարկել գազի մատակարարումը կրճատելու մասին ռուսական «Գազպրոմի» որոշումը: Ավելի վաղ հաղորդվել էր, թե «Գազպրոմը» 10%-ով կրճատել է թուրքական մասնավոր ընկերությունների համար գազի մատակարարման ծավալը՝ կապված գազի գնի շուրջ վեճի հետ: Մարտին «Գազպրոմի» ղեկավարությունը չբացառեց, որ ռուս-թուրքական հարաբերությունների կարգավորումից հետո կարող են վերսկսվել «Թուրքական հոսք» գազատարի նախագծի վերաբերյալ բանակցությունները, որի իրագործումը հնարավորություն կտա ամրապնդել եվրոպական շուկայում «Գազպրոմի» դիրքերը, ինչպես նաև նվազեցնել ԵՄ երկրներին գազի մատակարարման տարանցիկ ռիսկերը:

Մարտին Թուրքիայի Միջերկրածովյան հյուրանոցների ասոցիացիայի ղեկավար Յուսուֆ Հաջիսուլեյմանը հայտարարեց, որ Թուրքիայի զբոսաշրջային ոլորտը 2016թ. արդյունքներով կարող է կորցնել մոտ $12 մլրդ: Նրա հաշվարկներով՝ զբոսաշրջային բիզնեսը կկորցնի մոտ $8 մլրդ, եթե հանգս-

[*] Թուրքագետ:

տանալու նպատակով Թուրքիա չժամանի 4 մլն ռուսաստանցի զբոսաշրջիկ, իսկ ճգնաժամը կհանգեցնի բազմաթիվ հյուրանոցների փակմանը և մինչև 100.000 աշխատատեղի կորստյան։

Քաղաքական. Մարտին Ռուսաստանը և Թուրքիան շարունակեցին փոխադարձ մեղադրանքները և քննադատությունները, որոնք ի ցույց են դնում ճգնաժամի խորությունը և համակողմանիությունը.

- Թուրքիան հրետակոծել է Լաթաքիան, որի հետևանքով տուժել են օտարերկրացի լրագրողներ (ՌԴ ՊՆ պաշտոնական ներկայացուցիչ, գեներալ-մայոր Իգոր Կոնաշենկով),
- Թուրքիայից հումանիտար օգնության ավտոշարասյուներով զենք է մատակարարվում Սիրիայի զինյալներին, պետք է փակել թուրք-սիրիական սահմանը (ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրով),
- Թուրքիան խախտում է հարևան Իրաքի և Սիրիայի տարածքային ամբողջականությունը (Ս.Լավրով),
- Ռուսաստանն ապացույցներ ունի, որ Սիրիայում գտնվում են թուրքական զինված ուժեր (Ս.Լավրով),
- Սիրիայի հետ սահմանին Թուրքիայի գործողությունները սողոսկող բռնակցում են (Ս.Լավրով),
- Թուրքիան հրետակոծություններով խոչընդոտում է ԻՊ-ի դեմ Սիրիայի քրդերի պայքարին (Ս.Լավրով),
- Միայն Թուրքիան է դեմ հանդես գալիս Ժնևյան բանակցություններին Սիրիայի քրդերի մասնակցությանը (Ս.Լավրով),
- Թուրքիան խանգարում է Սիրիայի հետ սահմանին բռնությունների մակարդակի նվազմանը (ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա),
- Թուրքիայում ճնշում են ԶԼՄ-ն, Արևմուտքին կոչ ենք անում արձագանքել դրան (Մ.Զախարովա),
- Մոսկվան Անկարային առաջարկում է միջազգային դիտորդներ հրավիրել թուրք-սիրիական սահմանի անցակետ, որով օգնություն է գնում Սիրիա (Մ.Զախարովա),
- Թուրքիան պետք է վերադառնա քրդական հարցի խաղաղ կարգավորման ուղուն և հետաքննի երկրի հարավ-արևելքում մարդու իրավունքների զանգվածային խախտման դեպքերը (ՌԴ ԱԳՆ),

- Ռուսաստանն ու Արևմուտքն աջակցում են Քրդստանի աշխատավորական կուսակցությանը (*PKK*) և Սիրիայի քրդերի Դեմոկրատական միություն կուսակցությանը (*PYD*), որոնց Անկարան ճանաչում է որպես ահաբեկչական կազմակերպություն (Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողան),
- Մոսկվան, Բաշար Ասադի ռեժիմը, *PKK*-ն և *YPG*-ը գործում են միմյանց հետ փոխկապակցված և մտադիր են Թուրքիայի հարավային սահմաններին ստեղծել ահաբեկչական կազմավորում (Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլու)։

Այս ամենի հետ մեկտեղ, արվեցին նաև դրական հայտարարություններ, հղվեցին փոխադարձ ցավակցություններ։ Մարտին Ռուսաստանը դատապարտեց Անկարայի և Ստամբուլի ահաբեկչությունները և հղեց իր ցավակցությունները, Թուրքիան էլ Ռուսաստանին ցավակցեց Դոնի Ռոստովի օդանավակայանում ինքնաթիռի կործանման կապակցությամբ։ Եվ այնուամենայնիվ, ցավակցական երկու ուղերձում էլ շեշտադրումն արվել է «ժողովուրդ» և «զոհվածների, տուժածների հարազատներ» բառերի վրա։

Մարտին Մ.Զախարովան հայտարարեց, որ Թուրքիայի և Ռուսաստանի վեճը կրում է ժամանակավոր բնույթ, իսկ Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշը հայտարարեց, որ Թուրքիան կողմ է Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը։ Էրդողանը Բրուքինգսի ինստիտուտում (Վաշինգտոն) իր ելույթում Ռուսաստանին կոչ արեց վերսկսել համագործակցությունը՝ տարածաշրջանային խնդիրները լուծելու համար։ Թուրքիայի արտգործնախարար Մևլյութ Չավուշօղլուն հայտարարեց, որ Մոսկվայի և Անկարայի հարաբերությունները մի փոքր բարելավվել են, սակայն անկարելի է ակնկալել, որ շուտով դրանք կկարգավորվեն ամբողջովին։ Այդ ուղղությամբ Ռուսաստանին Թուրքիայի հասցեագրած ուղերձների թվում է նաև Իզմիրում Թուրքիայի քաղաքացի Ալփարսլան Չելիքի կալանավորումը, որն ավելի վաղ ստանձնել է 2015թ. նոյեմբերի 24-ին Թուրքիայի խոցած «Սու-24» ռմբակոծչից անկարգելով դուրս նետված օդաչու Օլեգ Պեշկովի սպանության պատասխանատվությունը։ Ի դեպ, մարտին Ռուսաստանից ռազմական պատվիրակություն ժամանեց Իզմիր՝ ստուգելու համար վստահության և անվտանգության ամրապնդման միջոցների մասին 2011թ. Վիեննայի փաստաթղթի դրույթների պահպանումը։ Դա նմանատիպ առաջին այցն էր Թուրքիա «Սու-24»-ի ճգնաժամից հետո։ Դրանից

առաջ Ռուսաստանը և Թուրքիան համաձայնության էին հասել 2016թ. փետրվարին չեղյալ հայտարարված դիտորդական թռիչքների հարցում:

Թուրքիա-ԱՄՆ - Մարտին ԱՄՆ պետդեպարտամենտը քանիցս տարբեր առիթներով մտահոգություն հայտնեց Թուրքիայում մարդու իրավունքների ոլորտի շուրջ ստեղծված իրավիճակի կապակցությամբ: ԱՄՆ պետդեպարտամենտն Էրդողանին կոչ արեց ընդունել *Cumhuriyet* թերթի գլխավոր խմբագիր Ջան Դյունդարի և Անկարայում թերթի բյուրոյի ղեկավար Էրդեմ Գյուլի ազատ արձակման վերաբերյալ ՍԴ որոշումը՝ ընդգծելով, որ մամուլի ազատությունը կարևոր տարր է Թուրքիայում նոր սահմանադրություն ընդունելու համար: Ավելի վաղ Էրդողանը հայտարարել էր, որ չի ընդունելու ՍԴ այդ որոշումը: ԱՄՆ պետդեպարտամենտը նաև մտահոգություն հայտնեց Թուրքիայում խոշոր լրատվամիջոցների փակման առնչությամբ՝ Թուրքիայի կառավարությանը կոչ անելով հետևել միջազգային նորմերին, այդ թվում նաև սեփական սահմանադրությանը: Պետդեպարտամենտն այդ հայտարարությունն արել է ընդդիմադիր *Zaman* թերթի և *Cihan* լրատվական գործակալության (գյուլենական ԶԼՄ) ղեկավարման համար դատարանի կողմից հոգաբարձուների նշանակման կապակցությամբ, ինչը, շատերի կարծիքով, կհանգեցնի դրանց փակմանը:

Դրա հետ մեկտեղ, ԱՄՆ պետդեպարտամենտը հայտարարեց, որ Միացյալ Նահանգները չի ցանկանում Սիրիայում քրդական ինքնավարության ստեղծում, իսկ Սպիտակ տունը *PKK*-ին կոչ արեց դադարեցնել Թուրքիայի դեմ հարձակումները: Մարտին Թուրքիայում ԱՄՆ նախկին դեսպաններ Մորթոն Աբրամովիչն ու Էրիկ Էդելմանը Էրդողանին կոչ արեցին հրաժարական տալ՝ ընդգծելով, որ Թուրքիան ավելի ուժեղ, կայուն և ժողովրդավարական կդառնա, եթե Էրդողանը փոխվի կամ հրաժարական տա: Ի պատասխան՝ Էրդողանի խոսնակ Իբրահիմ Քալընը հայտարարեց, որ Թուրքիային կարգադրելու օրերն անցել են:

Մարտի վերջին Էրդողանը հնգօրյա այցով մեկնեց ԱՄՆ՝ մասնակցելու Վաշինգտոնում միջուկային անվտանգության հարցերով գագաթաժողովին, ինչպես նաև Մերիլենդ նահանգում իսլամական կենտրոնի և մզկիթի բացման արարողությանը, որոնց կառուցումը ֆինանսավորել է Թուրքիայի կառավարությունը: Այցից առաջ և ընթացքում Էրդողանը մի շարք ուղերձներ ստացավ ԱՄՆ-ից: Նախ՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հրաժարվեց պաշտոնական երկկողմ հանդիպում ունենալ Էրդողանի հետ, և միայն ոչ պաշտոնական հանդիպում

ունեցավ նրա հետ: Թուրքական մամուլի պնդմամբ, երբ Էրդողանի ինքնաթիռը վայրէջք է կատարել Վաշինգտոնում՝ Էնդրյուս ավիաբազայում, նրան դիմավորել են Մևլյութ Չավուշօղլուն և Վաշինգտոնում Թուրքիայի դեսպան Մերդար Քըլըչը: Դիմավորողների թվում չի եղել ամերիկացի բարձրաստիճան որևէ պաշտոնյա: Օբաման նաև չընդունեց Մերիլենդում իսլամական կենտրոնի և մզկիթի բացման արարողակարգին մասնակցելու Էրդողանի հրավերը: Բացի այդ, Պենտագոնը մարտին հայտարարեց, որ իր մոտ 670 զինծառայող և քաղաքացիական ծառայող Թուրքիայից (Մուղլա, Իզմիր, Ադանա) տարհանվելու են անվտանգության նկատառումներից ելնելով: Դրանից առաջ իր աշխատակիցների ընտանիքների հանդեպ նման միջոցներ ընդունել է ԱՄՆ պետդեպարտամենտը: Ամերիկյան այս ուղերձներն ընդգծում են Էրդողանի քաղաքականությունից ԱՄՆ խոր դժգոհությունը՝ կապված մի շարք հարցերի (Սիրիայի քրդեր, Թուրքիայի քրդեր, Ռուսաստանի հետ բախեցնելու փորձեր, մարդու իրավունքներ) հետ:

Թուրքիա-ԵՄ - Մարտի 20-ին ուժի մեջ մտավ Եվրոպա փախստականների և ներգաղթյալների հոսքի սահմանափակման վերաբերյալ մարտի 18-ին ԵՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրված համաձայնագիրը (այն համաձայնեցվել է մարտի 7-ին Բրյուսելում տեղի ունեցած ԵՄ-Թուրքիա գագաթաժողովի ժամանակ): Թուրքիան պարտավորվեց սահմանափակել ԵՄ փախստականների հոսքն իր տարածքից և ԵՄ-ից հետ ընդունել ապօրինի ներգաղթյալներին: Անկարայի օգնության դիմաց ԵՄ-ը խոստացել է արագացնել Թուրքիային 3 մլրդ եվրոյի տրամադրումը, ինչը նախատեսված է ներգաղթյալներին աջակցելու նախագծերի իրագործման համար, մինչև 2018թ. հատկացնել ևս 3 մլրդ եվրո, արագացնել վիզային ռեժիմի վերացման գործընթացը, վերսկսել և ակտիվացնել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության գործընթացը:

Սակայն ԵՄ-ում և Թուրքիայում ոչ բոլորը գոհ մնացին այդ ամենից: Բելգիայի վարչապետ Շառլ Միշելը նշեց, որ Թուրքիան իսկապես շատ բան է պահանջում ԵՄ-ից: Ֆրանսիայի Ազգային ճակատ կուսակցության առաջնորդ Մարին լը Պենը միգրացիոն ճգնաժամի հարցում ԵՄ-ի հանդեպ Թուրքիայի քայլերը իսկական շանտաժ որակեց: Չեխիայի Կոմկուսի առաջնորդ Վոյտեխ Ֆիլիպը հայտարարեց, որ Թուրքիան ներգաղթյալների հանդեպ իր պարտավորությունները կատարում է ԵՄ հարկատուների հաշվին՝ մշտապես մեծացնելով պահանջները: Թուրքիայում ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) նախագահ Քեմալ Քըլըչդարօղլուն դատապար-

տեց միգրացիոն համաձայնագիրը՝ առաջարկելով ԵՄ-ին տրամադրել 6 մլրդ եվրո, որպեսզի նա իր մոտ տանի սիրիացի, աֆղանստանցի և պակիստանցի բոլոր փախստականներին: Թուրքիայի՝ Եվրամիության հարցերով նախարար Վոլքան Բոզքըրը շտապեց հանգստացնել, որ Հետընդունման մասին պայմանագրով Եվրոպայից կվերադարձվեն ոչ թե հարյուր հազարավոր կամ միլիոնավոր, այլ հազարավոր կամ տասնյակ հազարավոր մարդիկ:

Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը հայտարարեց, որ ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության վերաբերյալ բանակցությունները պահանջում են շատ մեծ ժամանակ, քանի դեռ չի լուծվել Հյուսիսային Կիպրոսի կարգավիճակի հարցը: Ինչ վերաբերում է վիզային ռեժիմի վերացմանը, ապա Կիպրոսի նախագահ Նիկոս Անաստասիդիսը հայտարարեց, որ Թուրքիան պետք է դրա համար կատարի ԵՄ 72 պահանջներից 35-ը: Այդ երկիրը դրանք պետք է կատարի մինչև մայիսի 4-ը, որպեսզի հնարավոր դառնա հուլիսին վիզային ռեժիմի վերացումը: Նա պահանջեց, որ Թուրքիան իր նավահանգիստներն ու օդանավակայանները բացի Կիպրոսի առջև և կղզուց դուրս բերի իր զորքերը: Թուրքական մամուլը հայտնեց, որ ԵՄ-ի կողմից վիզային ռեժիմի վերացումը կարող է հարվածել երկրի տնտեսությանը, քանի որ այդ դեպքում Թուրքիան ստիպված կլինի վիզային ռեժիմ սահմանել Ասիայի, Մերձավոր Արևելքի և Աֆրիկայի երկրների բազմաթիվ երկրների հանդեպ, ինչն էլ, իր հերթին, կհարվածի առևտրին, զբոսաշրջությանը, անշարժ գույքի ոլորտին:

ԵՄ-ը մարտին շարունակեց ուշադրության կենտրոնում պահել Թուրքիայում մարդու իրավունքների խախտումների հարցը: Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը հայտարարեց, որ ԵՄ-ին անդամակցելու թեկնածու երկիր Թուրքիան պետք է հարգի դեմոկրատական արժեքները՝ ԶԼՄ ազատությունը: ԵՄ դիվանագիտության ղեկավար Ֆեդերիկա Մոգերինին Թուրքիային կոչ արեց վերսկսել երկրի քրդերի հետ բանակցությունները: Թուրքական իշխանությունները մարտին ԵՄ-ին մեղադրեցին *PKK*-ի դեմ պայքարի հարցում «երկակի քաղաքականություն» վարելու մեջ: Նրանք Բելգիայից պահանջեցին վերացնել Բրյուսելում ԵՄ-Թուրքիա գագաթաժողովի անցկացման վայրից ոչ հեռու կանգնեցված *PKK* վրանը: Անկարայում Բելգիայի դեսպան Մարկ Թրենտեսաուն դրա համար կանչվեց Թուրքիայի ԱԳՆ:

Մարտին Իզմիրում անցկացվեց Թուրք-հունական բարձր մակարդակի համագործակցության խորհրդի 4-րդ նիստը, որին մասնակցեց Հունաստանի

վարչապետ Ալեքսիս Ցիպրասը՝ դառնալով Հունաստանի՝ վերջին 95 տարում Իզմիր այցելած առաջին վարչապետը: 1921թ. Իզմիր է ժամանել Հունաստանի վարչապետ Դիմիտրիս Գուարիսը (այն ժամանակ Իզմիրը գտնվել է Հունաստանի վերահսկողության տակ, սակայն կարճ ժամանակ անց այն տիրել են քեմալականները): Նիստի արդյունքներով Դավութօղլուն հայտարարեց, որ Թուրքիան և Հունաստանն աշխատանքներ են տանում համատեղ պատմություն գրելու և դասագրքեր պատրաստելու ուղղությամբ: Դավութօղլուն կարևորել է, որ երկու ժողովուրդներն ապրեն ոչ թե անցյալի բացասական դրվագներով, այլ ապագայում գեղեցիկ կապեր հիմնելու անհրաժեշտության գաղափարով:

Թուրքիա-Իրան - Մարտին թուրք-իրանական հարաբերություններում նկատվեց որոշակի ջերմացում, ինչը դրսևորվեց բարձր մակարդակի փոխադարձ այցերով և հայտարարություններով: Դա, թերևս, պայմանավորված է Սիրիայում հրադադարի հաստատմամբ (կրքերի որոշակի հանդարտեցմամբ), Սիրիայի մասնատմանը քրդաբնակ զգալի բնակչություն ունեցող այդ երկու երկրների դեմ լինելով, նաև նրանով, որ լարված հարաբերությունները բացասաբար են ազդել Իրանի և Թուրքիայի տնտեսական կապերի վրա: Իրանն ու Թուրքիան այժմ որոշել են, որ Սիրիայի հարցը չպետք է խանգարի իրենց հարաբերություններին:

Դավութօղլուն մեկնեց Իրան, որտեղ քննարկեց երկկողմ տնտեսական հարաբերություններն ու տարածաշրջանի անվտանգության հարցերը և հայտարարեց երկու երկրների փոխհարաբերություններում նոր ժամանակաշրջան սկսելու անհրաժեշտության մասին. «Չնայած Թուրքիայի և Իրանի միջև մի շարք հարցերում կան տարաձայնություններ, սակայն նրանք չեն կարող փոխել իրենց աշխարհագրական դիրքն ու պատմությունը: Թուրքիան Իրանի միջոցով դուրս է գալիս դեպի Կենտրոնական, Հարավային և Հարավարևելյան Ասիայի երկրներ, իսկ Իրանը Թուրքիայի տարածքով կարող է դուրս գալ Եվրոպայի երկրներ: Իրանն էներգակիրների խոշորագույն արտադրողներից է, իսկ Թուրքիան՝ խոշորագույն սպառողն է: Թուրքիան և Իրանը պետք է օգտագործեն իրենց տարանցիկ հնարավորությունները»: Դավութօղլուն հիշեցրել է, որ Թուրքիան չի լքել Իրանին, երբ նա միջազգային պատժամիջոցների ներքո էր: Նա հայտարարել է, որ Իրանի հանդեպ պատժամիջոցների վերացումը երկու երկրներին հնարավորություն կտա ապրանքաշրջանառության ծավալը հասցնել $30 մլրդ-ի: 2015թ. այն կազմել է $10 մլրդ-ից էլ պակաս, մինչդեռ 2014թ. կազմել է $15 մլրդ, իսկ 2012թ.՝ $22 մլրդ:

Դավութօղլուի այցից հետո Թուրքիա ժամանեց Իրանի արտգործնախարար Մոհամադ Ջավադ Զարիֆը, որը հայտարարեց, թե Թուրքիան իրենց համար շատ կարևոր հարևան է, և որ Իրանը և Թուրքիան կարող են արդյունավետորեն համագործակցել տարածաշրջանային ճգնաժամերի լուծման հարցում: Էրդողանն, իր հերթին, նշել է, որ Թեհրանի և Անկարայի միջև հարաբերությունների ընդլայնումը կծառայի ոչ միայն երկկողմ շահերին, այլև տարածաշրջանում խաղաղությանն ու անվտանգությանը: Առաջիկայում Թուրքիա կայցելի նաև Իրանի նախագահ Հասան Ռոուհանին:

Մարտին Իրանի իշխանություններն, անվտանգության նկատառումներից ելնելով, իրենց քաղաքացիներին կոչ արեցին Նովրուզի ժամանակ չայցելել Թուրքիա, ինչը Թուրքիայի զբոսաշրջային ոլորտին հասցված հերթական հարվածն էր:

Թուրքիա-Սիրիա - Մարտին Սիրիայի քրդերը շարունակեցին ահազանգել Թուրքիայի կողմից իրենց դիրքերի հրետակոծությունների մասին՝ ընդգծելով, որ իրենք չեն հարվածում Թուրքիայի տարածքին: Թուրքիայի ԱԳՆ-ն, սակայն, հայտարարեց, որ Սիրիայում հարվածում է միայն ԻՊ դիրքերին: Մարտին Սիրիայի քրդերի 3 ինքնավար շրջանների (Քոբանի, Աֆրին և Ջիզրե) պատգամավորները կողմ քվեարկեցին Սիրիայի հյուսիսում դաշնություն հռչակելուն: Թուրքիայի ԱԳՆ-ն դատապարտեց դա. «Մենք չենք ընդունում դաշնություն միակողմանի հռչակելը և աջակցում ենք Սիրիայի ազգային միասնությանը: Սիրիայի կառավարման ձևն ու համակարգը պետք է նոր սահմանադրության միջոցով լուծի ողջ Սիրիայի ժողովուրդը»:

Մարտին Թուրքիայի ՊՆ-ն հերքեց, թե թուրքական զորքերը գտնվում են Սիրիայի տարածքում, իսկ Թուրքիայի փոխվարչապետ Նուման Քուրթուլմուշը հայտարարեց, թե իր երկիրը չի դիտարկում Սիրիայի հակամարտությանը միայնակ միջամտելու հեռանկարը: Դավութօղլուն հայտարարեց, որ իրենք չեն ցանկանում Սիրիան մասնատված տեսնել՝ մանրամասնելով, որ այդ մասին հայտարարել է նաև Թեհրանում: Նա հիշեցրել է, որ 100 տարի առաջ կնքվել է Սայքս-Պիկոյի համաձայնագիրը՝ հիմք դնելով տարածաշրջանի մասնատմանը. «Մեզ անհրաժեշտ է թույլ չտալ տարածաշրջանի մասնատման կրկնություն: Ընդհակառակը, պետք է գործադրել բոլոր ջանքերը տարածաշրջանը միավորելու համար: Դրան կարող է նպաստել ինչպես Թուրքիան, այնպես էլ Իրանը: Թուրքիան միշտ կարծել է, որ տարածաշրջանի երկրները, նաև Սիրիան, պետք է իրենք լուծեն իրենց խնդիրները: Այժմ ցանկանում են

Սիրիան բաժանել 3-4 մասի, ինչպես նաև մասնատել Իրաքը և այդպիսով իրագործել նոր Սայքս-Պիկո: Մենք հակազդում ենք դրան»:

Թուրքիա-Ուկրաինա - Ուկրաինայի նախագահ Պյոտր Պորոշենկոն մարտին այցելեց Թուրքիա: Նա կոչ արեց արագացնել ազատ առևտրի համաձայնագրի շուրջ բանակցությունները, առաջարկեց օգտվել ուկրաինական ստորգետնյա գազապաստարաններից, Թուրքիային հրավիրեց մասնակցել այս տարի Ուկրաինայի կառավարության ծրագրած պետական ձեռնարկությունների մասշտաբային մասնավորեցմանը: Ազատ առևտրի գոտու հաստատումը պետք է նպաստի նրան, որ մինչև 2020թ. Թուրքիայի և Ուկրաինայի միջև ապրանքաշրջանառության ծավալը հասցվի $20 մլրդ-ի (այժմ այն կազմում է $3.6 մլրդ): Պորոշենկոն անհրաժեշտ է համարել Ղրիմի հարցի քննարկումներում Թուրքիան ներգրավելը, քանի որ Թուրքիան Ուկրաինային «կօգնի վերադարձնել» Ղրիմը: Էրդողանը Պորոշենկոյի հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ Թուրքիան չի ճանաչում Ղրիմի անցումը Ռուսաստանին և մշտապես կաջակցի Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը: Էրդողանի խոսքերով՝ Պորոշենկոյի հետ բանակցությունների գլխավոր թեմաներից մեկը դարձել է Ղրիմի թաթարների խնդիրը, որի հարցում Անկարան և Կիևը տարաձայնություն չունեն: Ի դեպ, Ղրիմի թաթարների մեջլիսի առաջնորդ, Ուկրաինայի Գերագույն ռադայի պատգամավոր Մուսթաֆա Ջեմիլևը հայտարարեց, որ Թուրքիան դե-ֆակտո միացել է Ղրիմի շրջափակմանը և որ այդ հարցում նրա վերաբերմունքը փոխվել է «Սու-24»-ի միջադեպից հետո:

Թուրքիայի ԱԳՆ-ն գրավոր հայտարարություն է տարածել 2014թ. մարտի 16-ին Ղրիմում Ռուսաստանին միանալու հանրաքվեի երկամյակի կապակցությամբ, որում վերահաստատեց, որ չի ճանաչում և դատապարտում է այդ հանրաքվեն ու դրան հաջորդած Ղրիմի անցումը Ռուսաստանին: Թուրքիայի ԱԳՆ-ն աջակցություն հայտնեց Ուկրաինայի ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը՝ նշելով, որ թերակղզու ներկայիս իրավիճակը Թուրքիայի տեսանկյունից չունի իրավական որևէ ուժ: Պորոշենկոն Թուրքիայի խորհրդարանի նախագահ Իսմայիլ Քահրամանի հետ հանդիպման ժամանակ կոչ արեց 1944թ. Ղրիմի թաթարների բռնագաղթը ճանաչել «ցեղասպանություն»: Պորոշենկոն ընդգծել է, որ երկու երկրների միջև ռազմավարական գործընկերության ուղղություններից մեկը պետք է դառնա պաշտպանության և անվտանգության ոլորտում համագործակցության ուժեղացումը:

Թուրքիա-Իսրայել - Մարտին Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն հայտարարեց, որ Իսրայելը ցանկանում է կարգավորել հարաբերությունները Թուրքիայի հետ և միշտ աջակցել է նրա հետ մերձեցման քաղաքականությանը: Էրդողանն ԱՄՆ-ում կողմ արտահայտվեց Իսրայելի հետ հարաբերությունների կարգավորմանն ու համագործակցության զարգացմանը: Էրդողանը Ստամբուլի ահաբեկչությունից հետո հեռախոսազրույց ունեցավ Իսրայելի նախագահ Ռեուվեն Ռիվլինի հետ, ինչը վերջին տարիներին Թուրքիայի և Իսրայելի նախագահների միջև առաջին հեռախոսազրույցն էր: Իսրայելը Թուրքիայի հետ բանակցում է նաև իր գազը վաճառելու շուրջ (տարեկան 10 մլրդ մ^3), որը կարող է որոշակի այլընտրանք դառնալ ռուսական գազին:

Թուրքիա-Ադրբեջան - Մարտին երկրորդ անգամ ահաբեկչության պատճառով չեղյալ հայտարարվեց Էրդողանի ադրբեջանական այցը: Այստեղ նա պետք է մասնակցեր Թուրք-ադրբեջանական բարձր մակարդակի համագործակցության խորհրդի 5-րդ նիստին: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի առաջարկով նիստը Բաքվի փոխարեն անցկացվեց Անկարայում, և դրա արդյունքներով երկու երկրները ստորագրեցին 6 փաստաթուղթ: Նիստը Բաքվում պետք է անցկացվեր փետրվարի 18-ին, սակայն փետրվարի 17-ին Անկարայի ահաբեկչության պատճառով չեղյալ հայտարարվեց Էրդողանի ադրբեջանական այցը: Մարտի 13-ին Անկարայի նոր ահաբեկչությունը վերստին չեղյալ հայտարարեց Էրդողանի ադրբեջանական այցը: Նիստի արդյունքներով Էրդողանը հայտարարեց, որ Իլհամ Ալիևի այցը ևս մեկ անգամ ապացուցում է «Մեկ ազգ, երկու պետություն» խոսքերի ճշմարտացիությունը, և որ Թուրքիան ԼՂ հարցում աջակցել ու աջակցելու է Ադրբեջանին: Էրդողանի խոսքերով՝ Թուրքիան և Ադրբեջանը ծրագրել են մինչև 2023թ. (Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 100-ամյակը) ապրանքաշրջանառության ծավալը հասցնել $15 մլրդ-ի, իսկ փոխադարձ ներդրումների ծավալը ներկայիս $13 մլրդ-ից 5 տարում հասցնել $20 մլրդ-ի: Էրդողանն ընդգծել է, որ հաջողության դեպքում դեկտեմբերին իրենք կմասնակցեն Բաքու-Թբիլիսի-Կարս (ԲԹԿ) երկաթուղու բացման արարողությանը: Խոսելով «Հարավային գազային միջանցքի» բաղկացուցիչ մաս Անդրանատոլիական գազատարի (*TANAP*) մասին՝ Էրդողանը հայտարարել է, որ իրենք աշխատում են նախագծի իրագործումն ավարտել ծրագրված ժամկետից շուտ. «Հավատում եմ, որ երկու տարի անց կնշենք *TANAP* գազատարի բացումը»: Մարտի 7-25-ին Թուրքիան և Ադրբեջանը Քոնիա նահանգում անցկացրին *TURAZ Şahini-2016* տարեկան պլանային համատեղ ռազմաօդային զորավարժությունները:

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ. մարտ

Ջոնի Մելիքյան[*]

Արտաքին քաղաքական կյանքը Վրաստանում ընթացիկ տարվա մարտին հարուստ է եղել ինչպես Վրաստանի ղեկավարության օտարերկրյա, այնպես էլ գործընկեր երկրների ղեկավարների Թբիլիսի կատարած ակտիվ այցելություններով: Անցած ամիս Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին իր առաջին պաշտոնական այցը կատարեց Բելառուս: Նախագահ Գեորգի Մարգվելաշվիլին այցելեց Ադրբեջան, իսկ խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլին խորհրդարանական պատվիրակության հետ պաշտոնական այցով մեկնեց Սաուդյան Արաբիա: Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեի արտաքին քաղաքական օրակարգը նույնպես բավական հագեցած էր. անցած ամիս նա այցելել է Բելգիա, Ադրբեջան, ԱՄՆ, Հայաստան և Հունգարիա: Ստորև ավելի մանրամասն կներկայացնենք վերը նշված բոլոր իրադարձությունները և Վրաստան-ԵՄ-ՆԱՏՕ, Վրաստան-Ռուսաստան փոխհարաբերությունները:

Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլին, գլխավորելով կառավարական պատվիրակությունը, մարտի 22-23-ին առաջին պաշտոնական այցը կատարեց Բելառուս: Վրաստանի պատվիրակության կազմում էին էկոնոմիկայի նախարար Դմիտրի Կումսիշվիլին և գյուղտնտնախարար Օթար Դանելիան: Վրացական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ երկրի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի, վարչապետ Անդրեյ Կոբյակովի, Բելառուսի Հանրապետության Ազգային ժողովի Հանրապետության խորհրդի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչի և այլոց հետ: Գեորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց նաև Վրաստան-Բելառուս բիզնես-ֆորումին, այցելեց Բարձր տեխնոլոգիաների պարկ, ծաղկեպսակ դրեց Հայրենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված հուշարձանին:

---

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

Վրաստանի կառավարության մամուլի ծառայության տեղեկատվությամբ՝ հանդիպումների ընթացքում կողմերը դիտարկել են երկկողմ հարաբերությունների բոլոր ուղղությունները, այդ թվում համագործակցությունն առևտրի, տրանսպորտի, կապի, տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության և մշակույթի ոլորտներում: Վրաստանի Վիճկոմի տվյալների համաձայն՝ Վրաստանի և Բելառուսի միջև արտաքին առևտրային շրջանառությունը 2015թ. կազմել է ավելի քան $41,2 մլն, արտահանումը՝ մոտ $20,5 մլն, ներմուծումը՝ $20,8 մլն: Սակայն Ա.Լուկաշենկոն նշել է, որ երկու երկրների նպատակը տնտեսական ոլորտում «$200 մլն առևտրային շրջանառության հասնելն է»: Ավելի ուշ՝ մարտի 21-22-ին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուպաշվիլին պաշտոնական այցով մեկնեց Սաուդյան Արաբիայի Թագավորություն (ՍԱԹ): Այցի արդյունքների հիման վրա Ուսուպաշվիլին հայտարարեց, որ այցելությունը «շատ արդյունավետ էր»: Նա նշել է ՍԱԹ տրամադրվածության կարևորությունը «Վրաստանի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության, նրա տնտեսական զարգացման աջակցության» ուղղությամբ:

Մարտի 14-18-ին Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն այցելեց ԱՄՆ: Վաշինգտոնում նա հանդիպեց ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերիին, որի հետ քննարկեց վրաց-ամերիկյան հարաբերությունների ներկա դրության հարցերը: Վրաստանի ԱԳՆ տեղեկատվության համաձայն՝ նախարարը հանդիպել է ԱՄՆ գործադիր (Սպիտակ տան և այլն) և օրենսդիր (Սենատի և Կոնգրեսի) իշխանության ներկայացուցիչների, այդ թվում՝ «Վրաստանի բարեկամների խմբի» համանախագահների հետ: Ջանելիձեն հանդիպումներ է ունեցել նաև ամերիկյան առաջատար հետազոտական կենտրոնների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, լրագրողների հետ և ելույթ է ունեցել Ատլանտյան խորհրդում:

Քերիի հետ հանդիպման ժամանակ ԱՄՆ պետքարտուղարը հաստատել է ԱՄՆ միանշանակ աջակցությունը Վրաստանի ինքիշխանության և «տարածքային ամբողջականության» առումով, նշել է, որ ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ ԵՄ-ի կողմից «ուժեղ» աջակցություն կա Վրաստանի եվրատլանտյան ձգտումների հարցում՝ ուղղված Վրաստանի «սերտ» ինտեգրմանը: Նա նշել է, որ ԱՄՆ-ը գնահատում է Վրաստանի ավանդն Աֆղանստանում գործադրվող ջանքերում և նրա ակտիվ հակաահաբեկչական աջակցությունը,

որը «շատ կարևոր է տարածաշրջանային մակարդակով»: Ջանելիձեն, իր հերթին, ողջունել է ԱՄՆ պետքարտուղարի ցանկությունը՝ այցելել Վրաստան, և նշել է, որ երկրի համար մեծ պատիվ կլինի ընդունել նրան: Նա նաև ավելացրել է, որ երկու երկրների միջև հարաբերությունները բոլոր մակարդակներում «երբեք այնքան ուժեղ չեն եղել, որքան այսօր»:

Ամսվա վերջին՝ մարտի 29-30-ին, Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն երկօրյա պաշտոնական այցով մեկնեց Հունգարիա, բանակցություններ անցկացրեց արտաքին գործերի և առևտրի նախարար Պետեր Սիյարտոյի, Հունգարիայի փոխվարչապետ Ժոլտ Շեմյենի, խորհրդարանի ներկայացուցիչների հետ: Ինչպես լրագրողներին ասացին նախարարները Բուդապեշտում կայացած մամուլի ասուլիսում, կողմերը քննարկել են երկկողմ համագործակցության մի շարք հրատապ հարցեր, ներառյալ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը: Վրաստանի ԱԳՆ մամուլի ծառայության տեղեկատվությամբ՝ հունգարական *Eximbank* բանկում բացվելու է $68 մլն-ի վարկային գիծ՝ վրաց-հունգարական բիզնես-նախագծերի իրականացմանն օգնելու համար: Բանակցությունների թեման են եղել նաև Եվրամիության առջև ծառացած մարտահրավերները և Վրաստանի եվրաինտեգրման հարցերն ու Հունգարիայի աջակցությունն այդ գործընթացին: Հունգարացի նախարարը նշել է, որ Վրաստանն «արժանի» է, որ հանվի վիզային ռեժիմը Եվրամիության երկրների հետ, քանի որ նրա կառավարությունը հաջող կերպով կատարել է Վիզային ռեժիմի ազատականացման գործողությունների պլանով նախատեսվող բոլոր պահանջները:

Ամսվա վերջին՝ մարտի 30-ին, Վրաստան այցելեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ֆիլիպ Համոնդը: Այցի շրջանակներում նա հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Գեորգի Կվիրիկաշվիլու հետ: Նրանք քննարկեցին ինչպես ներքաղաքական, այնպես էլ տարածաշրջանային բնույթի հարցեր, Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հեռանկարները: Մեծ Բրիտանիայի արտգործնախարարը հաստատեց աջակցությունը Վրաստանի տարածքային ամբողջականությանը, երկրի եվրատլանտյան ինտեգրման քաղաքականությանը: Նա նշեց նաև, որ Վրաստանը «տարածաշրջանային դեմոկրատիայի մոդել» է հանդիսանում, և այդ համբավը պետք է ամրապնդվի:

Վրաստանի վարչապետի և էներգետիկայի նախարարի հետ Ֆիլիպ Համոնդն այցելեց Հարավկովկասյան գազատարի (որի օպերատորն է *BP* ընկե-

ությունը) ընդլայնման աշխատանքներին, որոնք իրականացվում են Շահ-Դենիզի երկրորդ փուլի շրջանակներում: Համոնդն ասաց, որ Հարավկովկասյան գազատարի ընդլայնումը «Վրաստանի և տարածաշրջանի՝ թե՛ Վրաստանի, թե՛ Ադրբեջանի՝ որպես առևտրային գործընկերների հանդեպ Մեծ Բրիտանիայի մեծ հավատարմության հիանալի օրինակ է»:

Վրաստան-Ադրբեջան - Հարավկովկասյան տարածաշրջանային այցի շրջանակներում մարտի 6-7-ին առաջին պաշտոնական այցով Ադրբեջան մեկնեց Վրաստանի ԱԳՆ ղեկավար Միխայիլ Ջանելիձեն: Վրացի նախարարը հանդիպումներ ունեցավ իր ադրբեջանցի պաշտոնակից Էլմար Մամեդյարովի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի, վարչապետ Արթուր Ռասիզադեի և Միլի մեջլիսի նախագահ Օքթայ Ասադովի հետ: Վրաստանի ԱԳՆ ղեկավարը, ըստ արարողակարգի, պսակ դրեց Ադրբեջանի ազգային հերոս Հեյդար Ալիևի, շեհիդների ծառուղու, ինչպես նաև «Անմար կրակի» հուշարձաններին:

Ադրբեջանի նախագահի խոսքերով՝ Վրաստանի ԱԳ նախարարի այցը «լավ հնարավորություն է ընթացիկ տարվա համատեղ միջոցառումների ծրագրի քննարկման համար»: Ի.Ալիևը նշեց նաև երկու երկրների կողմից մի շարք հարցերի հաջող լուծման և քաղաքական, տնտեսական, էներգետիկ, հումանիտար ոլորտներում նրանց էլ ավելի մերձեցման մասին:

Երկու երկրների ԱԳ նախարարների հանդիպման ժամանակ (նախարարների մակարդակով և ընդլայնված ձևաչափով) կողմերը քննարկեցին երկրների միջև համագործակցության ակտիվացման հարցեր: Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովն ասաց, որ այդ հանդիպումը տրամաբանական շարունակությունն է երեք երկրների (Ադրբեջան, Վրաստան, Թուրքիա) ԱԳ նախարարների հանդիպման ձևաչափի, որը տեղի էր ունեցել փետրվարի 19-ին: «Մեր հարաբերությունները Վրաստանի հետ ավելին են, քան ռազմավարական գործընկերությունը»,- ասաց Մամեդյարովը:

Կողմերը քննարկեցին նաև ադրբեջանա-վրացական պետական սահմանի (որի երկարությունը կազմում է 480 կմ, որից 314-ը արդեն համաձայնեցված է) սահմանագծման ընթացակարգն ավարտելու հարցը: Նշվեց, որ շուտով այս հարցը կքննարկվի աշխատանքային խմբի կողմից, ինչի համար Ադրբեջան պետք է այցելեն վրացի փորձագետներ: Ադրբեջանի ԱԳ նախարարն ասաց նաև, որ առաջիկայում տեղի է ունենալու նաև «Ադրբեջան-Վրաստան» միջկառավարական հանձնաժողովի նիստը:

Մի քանի օր հետո՝ մարտի 10-ին, տեղի ունեցավ Վրաստանի նախագահ Գեորգի Մարգվելաշվիլու այցն Ադրբեջան: Նա մասնակցեց Բաքվի IV գլոբալ ֆորումին՝ «Դեպի բազմաբևեռ աշխարհ» թեմայով: Համաժողովում ելույթ ունենալուց բացի Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ նաև իր ադրբեջանցի պաշտոնակցի հետ: Գեորգի Մարգվելաշվիլին նշեց, որ վրաց-ադրբեջանական հարաբերությունների էլ ավելի խորացմանը նպաստել է «համատեղ հռչակագիրը», որը ստորագրվել է Ադրբեջանի նախագահի՝ 2015թ. նոյեմբերին Վրաստան կատարած պաշտոնական այցի ընթացքում: Նա ավելացրեց նաև, որ Վրաստանը խիստ շահագրգռված է Ադրբեջանի հետ էներգետիկ ոլորտում հարաբերությունների հետագա զարգացմամբ՝ ողջունելով ավելի վաղ *SOCAR*-ի հետ ստորագրված համաձայնագիրը Վրաստանին բնական գազի մատակարարման ծավալների ավելացման մասին, ինչն առաջիկա երկու տարվա համար լուծել է Վրաստանի երկնագույն վառելիքի դեֆիցիտի հարցը: «Այդ համաձայնագիրը մեկ անգամ ևս հաստատեց, որ Վրաստանի և Ադրբեջանի միջև լիակատար փոխըմբռնում գոյություն ունի»,- ասաց Մարգվելաշվիլին:

Շարունակելով հարավկովկասյան շրջագայությունը՝ Վրաստանի արտգործնախարար Միխայիլ Ջանելիձեն մարտի 24-25-ին պաշտոնական այց կատարեց Հայաստանի Հանրապետություն, որի ընթացքում հանդիպում ունեցավ իր հայ պաշտոնակցի՝ Էդվարդ Նալբանդյանի, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի և վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ: Վրացական պատվիրակությունը, ըստ արարողակարգի, այցելեց Ծիծեռնակաբերդի Ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշահամալիր և ծաղկեպսակ դրեց «Անմար կրակի» մոտ:

Երկու երկրների ԱԳՆ ղեկավարների հանդիպմանը քննարկվեցին երկկողմ համագործակցության խորացման և կապերի ակտիվացման հարցեր: Վրացի նախարարի խոսքերով՝ չնայած արտաքին քաղաքականության տարբեր ուղղություններին, Վրաստանը և Հայաստանը «գտել են միջազգային գործընթացները գոյություն ունեցող նախագծերի շրջանակներում փոխգործակցության բարելավման համար օգտագործելու ուղիներ»: Հայաստանի արտգործնախարարն ասաց, որ երկու երկրների միջև հարաբերությունները «բարիդրացիական» են, դրանցում «խնդիրներ չկան», և դրանք շարունակում են խորանալ և զարգանալ: Կողմերը քննարկեցին նաև ավելի քան 80 համատեղ

պայմանավորվածությունների վերաբերյալ հարցեր, որոնք «դրականորեն են ազդում երկկողմ համագործակցության վրա և հնարավորություն են ընձեռում հարաբերությունների խորացման համար»: Քննարկված հարցերից էր տրանսպորտային համակարգի, զբոսաշրջության, էներգետիկ ոլորտի զարգացումը: Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի հետ հանդիպման ժամանակ քննարկվեց տնտեսական համագործակցության գծով միջկառավարական հանձնաժողովի աշխատանքի հարցը:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, ընդունելով Վրաստանի ԱԳՆ ղեկավարին, մեկ անգամ ևս ընդգծեց, որ երկու երկրների արտաքին քաղաքական վեկտորների տարբերությունը «հնարավորություն է և ոչ թե խոչընդոտ երկկողմանի հարաբերություններում»: Ջանելիձեն, իր հերթին, նշեց այն փաստը, որ, չնայած երկու երկրների արտաքին քաղաքական տարբեր ուղեգծերին, երկկողմանի հարաբերությունները, «միևնույն է, հաջող են զարգանում», ինչպես նաև ողջունեց Հայաստանի և ԵՄ-ի միջև բանակցությունների սկիզբը Շրջանակային նոր համաձայնագրի ուղղությամբ:

Վրաստան-ԵՄ - Վրաստան-ԵՄ փոխհարաբերությունների օրակարգում մարտին ընթացել են գործընթացներ՝ կապված վիզային ազատականացման հետ: Մարտի 2-ին, օրինակ, Եվրամիությունում Վրաստանի դեսպան Նատալյա Սաբանաձեն ասաց, որ Ուկրաինային ԵՄ վիզային ազատականացում տրամադրելու հարցը Վրաստանից առանձին է քննարկվելու: Դրանից հետո, ինչպես և սպասվում էր, մարտի 9-ին Եվրահանձնաժողովը հանդես եկավ Եվրախորհրդարանին և ԵՄ Խորհրդին արված պաշտոնական առաջարկությամբ՝ Շենգենյան գոտում հանել վիզաները Վրաստանի քաղաքացիների համար: Օրենսդրական նախաձեռնությունը, որը հրապարակվել է Եվրամիության փաստաթղթերի ռեեստրում, մինչև ուժի մեջ մտնելը պետք է հաստատեն Եվրախորհրդարանը և ԵՄ անդամ պետությունները: Նախաձեռնությունում ասվում է, որ բարեփոխումների տեսակետից Վրաստանը կատարել է Վիզային ազատականացման գործողությունների պլանով նախատեսված բոլոր առաջադրանքները և «բավարարում է բոլոր պահանջվող չափանիշներին, որպեսզի նրա քաղաքացիներն ազատվեն վիզային պահանջներից»:

Մարտին Վրաստան այցելեց նաև առևտրի հարցերով եվրահանձնակատար Սեսիլիա Մալմսթրյոմը: Մարտի 21-ին սկսված այցի նպատակը Վրաս-

տանի և ԵՄ-ի միջև Խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի հարցերի քննարկումն էր:

Մարտի 23-ին Վրաստան այցելեց լեհական պատվիրակությունը՝ Լեհաստանի արտաքին գործերի նախարարության պետական քարտուղար Յեն Ջիեջիչակի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էր Լեհաստանի Սեյմի պատգամավոր, Վրաստանի հետ խորհրդարանական բարեկամության խմբի ղեկավար Մալգոժատա Գոշիևսկան: Այցելության շրջանակներում պատվիրակության անդամները ճանաչողական հանդիպումներ ունեցան Վրաստանի ԱԳ նախարար Միխայիլ Ջանելիձեի հետ, աշխատանքային հանդիպում ունեցան նախարարի առաջին տեղակալ Դավիթ Զալկալիանիի հետ: Վրաստանի ԱԳՆ տեղեկատվությամբ՝ կողմերն ուշադրության կենտրոնում են պահել երկու երկրների խորհրդարանական համագործակցության հետագա խորացման հարցը: Լեհական կողմը պատրաստակամություն է հայտնել «առավելագույն օգնություն» ցուցաբերել Վրաստանին երկրի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացում:

Վրաստան-ՆԱՏՕ - Վրաստանի ԱԳ նախարար Միխայիլ Ջանելիձեն մարտի 2-ին Բրյուսելում հանդիպեց ՆԱՏՕ գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուի հետ, որը հավաստիացրեց, որ դաշինքն աջակցում է Վրաստանին «բարեփոխումների հավակնոտ օրակարգի» հարցում: Ըստ նրա՝ Վրաստան-ՆԱՏՕ էական փաթեթը, որն առաջարկվել է Վրաստանին 2014թ., «լավ» է իրականացվում, նա ընդգծեց դաշնակիցների պատրաստակամությունը՝ «գտնել ուղիներ Վրաստանի հետ ՆԱՏՕ համագործակցության ուժեղացման համար»:

Այցի կետերից մեկը դարձավ Վրաստանի ԱԳՆ ղեկավարի և ՆԱՏՕ անդամ երկրների մշտական ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած Հանձնաժողովի նիստը: Այն տեղի ունեցավ «ՆԱՏՕ-Վրաստան» հանձնաժողովի՝ փետրվարի 11-ին Բրյուսելում կայացած նիստից հետո՝ պաշտպանության նախարարների մակարդակով: ԱԳՆ տեղեկատվության համաձայն՝ կողմերը քննարկել են ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման գործընթացի զարգացման, «ՆԱՏՕ-Վրաստան» էական փաթեթի իրականացման և քաղաքական ու գործնական համագործակցության խորացման հարցեր՝ դաշինքի Վարշավյան գագաթաժողովի նախապատրաստման համատեքստում:

ԱԴՐԲԵՋԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. մարտ

Անուշավան Բարսեղյան*

Ադրբեջան-Թուրքիա - Տեղի է ունեցել Ադրբեջան-Թուրքիա բարձր մակարդակի ռազմավարական համագործակցության խորհրդի հինգերորդ նիստը երկու նախագահների մասնակցությամբ: Ստորագրվել է 6 փաստաթուղթ, այդ թվում՝ նիստի հռչակագիրը, մշակութային և կրթական նպատակներով ռազմական և քաղաքացիական անձնակազմերի փոխանակության, դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսությունների աշխատակիցների ընտանիքների անդամների վարձատրվող աշխատանքային գործունեության, դատական փորձաքննության ոլորտում համագործակցության, վարորդական իրավունքի վկայականների փոխադարձ ճանաչման և տեխնիկական համագործակցության մասին միջկառավարական համաձայնագրերը: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Թուրքիայի նախագահը Ադրբեջան կայցելի ս.թ. ապրիլի 25-ին:

Ադրբեջանի և Թուրքիայի ռազմաօդային ուժերը (ՌՕՈւ) մարտի 7-25-ը, ռազմական համագործակցության տարեկան պլանի համաձայն, համատեղ *«TURAZ Şahini-2016»* զորավարժություններ են անցկացրել Թուրքիայի *«Anadolu Kartalı»* օդային զոտում: Դրանք ադրբեջանցի օդաչուների մասնակցությամբ առաջին զորավարժություններն էին Ադրբեջանի սահմաններից դուրս: Զորավարժություններին, որոնց Ադրբեջանը ներկայացել է 6 ինքնաթիռներով, մասնակցել են МИГ-29, F-16 կործանիչներ, СУ-25 գրոհային ինքնաթիռներ, Ми-17 և *«Терминатор»* ուղղաթիռներ: Իրականացվել են ճանաչողական բնույթի թռիչքներ, թուրք օդաչուները թռիչքներ են իրականացրել ռուսական արտադրության, իսկ ադրբեջանցիները՝ ամերիկյան ինքնաթիռներով, ոչնչացվել են պայմանական հակառակորդի ռազմական օդանավակայանը և ռազմավարական նշանակության օբյեկտները: Զորավարժությունները ողջունել է ԱՀ-ում

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

Ռումինիայի դեսպան Կ.Չոբանուն, որը ՆԱՏՕ ռեզիդենտ-համակարգողն է Ադրբեջանում: Վերջինս վերահաստատել է Հյուսիսատլանտյան դաշինքի համար Ադրբեջանի շատ կարևոր և արժեքավոր գործընկեր լինելու հանգամանքը:

Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, մարտական պատրաստվածության և ստորաբաժանումների փոխգործակցության բարձրացման նպատակով Ադրբեջանի և Թուրքիայի ԶՈՒ ղեկավար կազմերը փոխադարձության սկզբունքով այսուհետև կարճաժամկետ ծառայություն կիրականացնեն միմյանց զինված ուժերում:

Ռուս-թուրքական լարվածության հետևանքները Թուրքիայից Կենտրոնական Ասիա իրականացվող թուրքական բեռնափոխադրումների վրա մեղմելու նպատակով իրականացված Ադրբեջանի քայլերի շնորհիվ 2016թ. հունվար-փետրվար ամիսներին նշված երթուղով բեռնափոխադրումներ է իրականացրել մոտ 1500 բեռնատար, ինչը 5 անգամ ավելի է անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ադրբեջան-Ռուսաստան - Ս.թ. մարտին ՌԴ փոխվարչապետ Դ.Ռոգոզինի գլխավորած պատվիրակությունը (որի կազմում են եղել նաև *«Рособоронэкспорт»,* Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության (*ՖՍՎՏՀ*) ղեկավարության ներկայացուցիչները) Բաքու էր ժամանել նախկինում կնքված սպառազինությունների վաճառքի պայմանագրերի հետ կապված խնդիրները կարգավորելու նպատակով:

Ռուսական աղբյուրների համաձայն, էներգակիրների վաճառքից ստացվող եկամուտների կտրուկ նվազումն Ադրբեջանի համար դժվարություններ է ստեղծել սպառազինությունների գնման նախկին պարտավորությունները կատարելու առումով: «Կոմերսանտ» պարբերականի համաձայն, վճարումների ուշացման հետևանքով պատվիրված տեխնիկան պատրաստված և տեղ է հասցված, սակայն կանգնած է նավահանգստում՝ սպասելով իրավիճակի հստակեցման: Հայտնի է, որ 2010-2014թթ. Բաքուն Մոսկվայի հետ կնքել է ընդհանուր $4մլրդ-ի սպառազինության գնման համաձայնագրեր, որոնց մեծ մասն արդեն իրականացված է: Մնացել է որոշ քանակությամբ տանկերի, հետևակի մարտական մեքենաների և հրետանային համակարգերի մատակարարումը, որոնք էլ, հավանաբար, դարձել են քննարկման առարկա նշված բանակցությունների ընթացքում: Ի.Ալիևի հետ հանդիպման ժամանակ Դ.Ռոգոզինը հայ-

տարարել է, որ Ռուսաստանի և Ադրբեջանի հարաբերությունները գտնվում են ամենաբարձր մակարդակի վրա, և, չնայած համաշխարհային տնտեսական ճգնաժամին ու էներգակիրների գների անկմանը, Ռուսաստան-Ադրբեջան միջպետական հանձնաժողովին հաջողվել է էլ ավելի ընդլայնել համագործակցությունը տնտեսական, մշակութային, կրթական և այլ ոլորտներում:

Հարկ է նշել, որ Ադրբեջանի ԱԳ նախարար Է.Մամեդյարովը հերքել է Բաքվի և Մոսկվայի միջև առկա ֆինանսական չլուծված հարցերի մասին լուրերը: Ըստ նրա, գոյություն ունեցող խնդիրները կապված են կնքված պայմանագրերում ամրագրված և փաստացի ստացվող սպառազինության տեխնիկական պարամետրերի անհամապատասխանության հետ: ԱՀ ԱԳ նախարարը նշել է, որ Դ.Ռոգոզինը եկել էր հասկանալու առկա խնդիրների էությունը և ստացել լիարժեք պարզաբանումներ:

Սակայն կարծես այնքան էլ հարթ ու հասկանալի չի եղել գործընթացը, ինչի մասին է վկայում այն փաստը, որ Դ.Ռոգոզինի այցից անմիջապես հետո ԱՀ ՊՆ սպառազինության և տեխնիկայի վարչության պետ (նա նույնպես հանդիպում է ունեցել Դ.Ռոգոզինի հետ) Յ.Ախադովը հեռացվել է աշխատանքից, իջեցվել է նրա զինվորական կոչումը: Ադրբեջանական լրատվամիջոցները նույնիսկ հնարավոր են համարում վերջինիս ձերբակալությունն ինչ-որ $3,5 միլիոնանոց գաղտնի գործարքի հետ կապի պատճառով:

Ըստ ռուսական ԶԼՄ-ի, Դ.Ռոգոզինն ունեցել է նաև այլ առաքելություն: ՌԴ արտաքին հետախուզական ծառայությանը հայտնի է դարձել, որ Թուրքիայի Ազգային հետախուզական ծառայությունը (*MIT*) մտադիր է Ադրբեջանում իր ազդեցության գործակալների միջոցով անցկացնել հատուկ օպերացիա Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում պատերազմական գործողություններ սադրելու նպատակով: Դիվանագիտական ճանապարհով սույն տեղեկությունները փոխանցվել են Երևանին և Բաքվին, իսկ Դ.Ռոգոզինը Բաքու կատարած չպլանավորված այցի ընթացքում պետք է Ի.Ալիևին ներկայացներ այս հարցի վերաբերյալ Մոսկվայի դիրքորոշումը:

ՄԱԿ-ում Ադրբեջանի պատվիրակությունը հերթական անգամ դատապարտել է Ղրիմի միացումը Ռուսաստանին ՄԱԿ վեհաժողովի կողմից Ուկրաինայի տարածքային ամբողջականությանը սատարող բանաձևի երկու տարվան նվիրված կլոր սեղանի քննարկման ընթացքում: Միջոցառմանը

ելույթ են ունեցել ՄԱԿ-ում ԱՄՆ, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի, ԱՀ, Վրաստանի և Մոլդովայի ներկայացուցիչները:

Ադրբեջան-Վրաստան - Այլ երկրներից Վրաստանի բնական գազի գնման բանակցություններն իրենց հանգուցալուծումը գտան ամսվա սկզբին: Վրաստանի փոխվարչապետ Կ.Քալաձեն Բաքվում համաձայնության եկավ Ադրբեջանի պետական նավթային ընկերության (*SOCAR*) հետ, ըստ որի՝ Վրաստանն Ադրբեջանից կստանա լրացուցիչ 500 մլն մ³ բնական գազ և $35-40-ով կիջեցվի կոմերցիոն գազի գինը: Բաքվից վերադառնալուց հետո Կ.Քալաձեն խորհրդարանական լսումների ընթացքում հայտարարել է, որ *SOCAR*-ի հետ կնքված պայմանագրից հետո Վրաստանը լիովին ապահովված է բնական գազով և «Գազպրոմից» լրացուցիչ գազի գնման անհրաժեշտություն այլևս չկա: Մինչ այդ վրացի պաշտոնյան հայտարարել էր նաև իրանական գազի գնման անանպատակահարմարության մասին՝ վերջինիս բարձր գնի պատճառով: Հարկ է նշել, որ երկարատև բանակցությունների արդյունքում Վրաստանը, տնտեսապես շահելով, այնուհանդերձ, չկարողացավ ապահովել նախկինում հայտարարած էներգակիրների դիվերսիֆիկացիան, իսկ Ադրբեջանն այլ երկրներից գազ գնելու պարագայում, գնային հարցում զիջումների գնալով, ի վերջո կարողացավ պահպանել Վրաստանի նկատմամբ էներգետիկ ոլորտի մենաշնորհ դիրքերը:

Ադրբեջանը և Վրաստանը ԱԳ նախարարների մակարդակով պայմանավորվածություն են ձեռք բերել սահմանազծման մասին: Գոյություն ունեցող ընդհանուր 480կմ սահմանից ներկայումս համաձայնեցված է 314կմ-ի սահմանազծումը:

Մշակութային կապերը զարգացնելու նպատակով Բաքվում տեղի է ունեցել Ադրբեջանի մշակույթի ու զբոսաշրջության և Վրաստանի մշակույթի ու հուշարձանների պահպանության նախարարությունների ստեղծած աշխատանքային խմբի առաջին նիստը: Քննարկվել են միջկառավարական համաձայնագրի շրջանակներում մշակութային համագործակցության ծրագրի հաստատման, ինչպես նաև կինոարտադրության, թանգարանային գործի, արվեստի, կրթության և մշակութային ժառանգության պահպանման հարցեր:

Ադրբեջան-Իրան - Նախորդ ամիս ԱՀ նախագահ Ի.Ալիևի Թեհրան կատարած այցը նոր թափ է հաղորդել իրանա-ադրբեջանական հարաբերություններին և դրականորեն ազդել միջպետական հռետորաբանության վրա:

Դրա մասին է վկայում Իրանի կառավարության նախագահ Մոհամադ Բակեր Նոբախտի հայտարարությունը, թե առաջիկայում Իրանի և Ադրբեջանի կապերը կհասնեն ռազմավարական համագործակցության մակարդակի: Ըստ նրա՝ Իրան-Ադրբեջան հարաբերությունների զարգացմանը կնպաստեն նաև Ռուսատանի հետ սերտացող հարաբերությունները:

ՌԴ-Ադրբեջան-Իրան եռակողմ տնտեսական համագործակցության աշխուժացմանը զուգահեռ՝ ամրապնդվում են կապերն այլ ոլորտներում: Այս ամիս Բաքվում Ադրբեջանի պետական սահմանային ծառայության ղեկավար Է.Գուլիևի, Իրանի Սահմանային զորքերի հրամանատար Քասիմ Ռեզայիի և ՌԴ ԴԱԾ տնօրենի տեղակալ Վ.Կուլիշովի հանդիպման ընթացքում քննարկվել է իրավիճակը Կասպից ծովում, այդ թվում՝ կատարված աշխատանքները մաքսանենգության, անօրինական միգրացիայի և ձկնագողության դեմ պայքարում:

Էներգետիկ ոլորտի ուշագրավ զարգացումներից է *SOCAR*-ի նախագահի հայտարարությունն իրանական կողմի հետ փոխանակման ձևաչափով բնական գազի ձեռքբերման նպատակով վարվող բանակցությունների մասին: Ադրբեջանական կողմը մտադիր է գարնանը և ամռանը իրանական գազով լրացնել սեփական գազապահեստարանները, իսկ ձմռանն այն մատակարարել Իրանի հյուսիսային շրջաններին:

Ադրբեջան-ԵՄ/ԵԱՀԿ - Ամիսն ակտիվ էր եվրոպական կառույցների հետ շփումների առումով: Տարածաշրջանային այցի շրջանակներում Բաքվում էր գտնվում ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինին, որն Ի.Ալիևի հետ հանդիպման ընթացքում վերահաստատել է աջակցությունը «Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը և ինքնիշխանությանը» և ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին: Քննարկվել են նաև քաղաքական բարեփոխումների, տնտեսական համագործակցության, էներգետիկ և ֆինանսական անվտանգության հետ կապված հարցեր:

«Հարավային գազային միջանցք» նախագծի խորհրդատվական խորհրդի նիստում Ֆ.Մոգերինիի և Ի.Ալիևի ներկայությամբ ստորագրվել է համատեղ հռչակագիր, որում նշվում է էներգակիրներ արտադրող, տարանցիկ և սպառող երկրների միջև ռազմավարական հարաբերությունների զարգացման և խորացման, ինչպես նաև Ադրբեջանի էներգակիրներով եվրոպական շուկան

ապահովելու մտադրությունը: Նիստին մասնակցել են նախագծի անդամ երկրների էներգետիկայի նախարարները, ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի և ԵՄ ներկայացուցիչները: Եվրահանձնաժողովի փոխնախագահ Մ.Շևչովիչը հայտարարել է, որ համաշխարհային շուկայի ցանկացած զարգացման դեպքում «Հարավային գազային միջանցք» նախագիծը կիրականացվի ըստ նախատեսված ժամանակացույցի, և 2020թ. ադրբեջանական գազը կհասնի Եվրոպա:

Բացի Ֆ.Մոգերինիից, այս ամիս Բաքու էին այցելել նաև ԵԽԽՎ նախագահ Պեդրո Ագրամունտը, Հվ.Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Հ.Զալբերը:

Եվրոպական կառույցները դրականորեն են արձագանքել Նովրուզի կապակցությամբ Ի.Ալիևի հայտարարած համաներմանը, որի արդյունքում ազատ է արձակվել 148 դատապարտյալ, այդ թվում՝ քաղբանտարկյալներ: Եվրոպայի և ԱՄՆ ճնշման տակ ընդունված սույն համաներումը ողջունել են ԵԽԽՎ նախագահ Պ.Ագրամունտը, ԵԱՀԿ ԽՎ նախագահ Ի.Կաներվան, ԵԱՀԿ ԽՎ ժողովրդավարության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերի հանձնաժողովի նախագահ Ի.Սանթոսը, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆ.Մոգերինին:

Հվ.Կովկասում ԵԱՀԿ ԽՎ հատուկ ներկայացուցիչ Քրիստիան Վիգենը ԱՀ դատարանի կողմից քաղբանտարկյալ Ինթիգամ Ալիևի ազատ արձակումը համարել է ոչ միայն միջազգային կառույցների, այլ նաև սեփական հանրության հետ աշխատելու Ադրբեջանի իշխանության պատրաստակամության նշան:

Ադրբեջան-ԱՄՆ - Ի.Ալիևի հայտարարած համաներումը ողջունել է նաև ԱՄՆ Կոնգրեսին ներկայացված «Ադրբեջանի ժողովրդավարության ակտ» օրինագծի հեղինակ, ԱՄՆ Հելսինկյան հանձնախմբի նախագահ Ք.Սմիթը՝ միաժամանակ հույս հայտնելով, որ ազատ կարձակվեն նաև մյուս քաղբանտարկյալները: Ընդհանուր խորապատկերին առանձնանում է *Freedom House* իրավապաշտպան կազմակերպության նախկին ղեկավար և ԱՄՆ պետքարտուղարի մարդու իրավունքների և ժողովրդավարության հարցերով նախկին օգնական Դ.Կրամերի կոչը, որ ԱՄՆ-ում Ի.Ալիևին չպետք է ընդունեն բարձր մակարդակով, քանի դեռ նա ազատ չի արձակել բոլոր քաղբանտարկյալներին:

«Հարավային գազային միջանցք» նախագծի ֆինանսավորման նպատակով Ադրբեջանը պատրաստվում է թողարկել և միջազգային շուկա հանել $2 մլրդ արժողության պարտատոմսեր: Ադրբեջանական պատվիրակությունը

ԱՀ ֆինանսների նախարար Ս.Շարիֆովի, նախագծի համակարգող ընկերության (*«Southern Gas Corridor Company», SGCC*) և ԱՀ պետական նավթային հիմնադրամի ներկայացուցիչների մասնակցությամբ, ներդրողների հետ հանդիպման նպատակով հանդիպումներ է անցկացրել Նյու Յորքում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Բոստոնում և Լոնդոնում: ԱՀ կառավարության ս.թ մարտի 7-ի որոշմամբ պետական երաշխավորության պարտատոմսերը միջազգային ֆինանսական շուկաներ հանելու իրավունքը փոխանցվել է *Citi Bank, UniCredit, JP Morgan* բանկերին: *Lazard Freres SAS* ընկերությունը հանդես է գալու որպես ադրբեջանական կողմի ֆինանսական խորհրդատու:

«Ադրբեջանա-ամերիկյան ալյանս» (ԱԱԱ) լոբբիստական կազմակերպության նախագահի պաշտոնից հրաժարական է տվել նախկին կոնգրեսական Դեն Բերթոնը՝ մեկ տարի աշխատավարձ չստանալու պատճառաբանությամբ: Հարկ է նշել, որ ԱԱԱ-ն 2015թ. սեպտեմբերին փաստացի դադարեցրել էր գործունեությունը, սակայն մինչ այդ անմիջականորեն կոնգրեսականների և սենատորների շրջանում լոբբիստական գործունեության իրականացման վրա ծախսում էր պատկառելի գումարներ, մասնավորապես, ԱԱԱ-ն նշված նպատակներով *Fabiani&Co* ընկերությանը 2014թ. վճարել է $2,4 մլն, իսկ 2015թ. առաջին ինն ամիսներին՝ $1,3 մլն: ԱԱԱ կազմալուծումը պայմանավորված է ինչպես ֆինանսական դժվարություններով, այնպես էլ միջկլանային հակամարտության համատեքստում՝ կազմակերպության հիմնադիր Անար Մամեդովի հոր՝ ԱՀ տրանսպորտի նախարար Զիա Մամեդովի առջև ծառացած խնդիրներով:

Բաքվի IV գլոբալ ֆորումը - Բաքվում անցկացված «Բազմաբևեռ աշխարհ» չորրորդ գլոբալ ֆորումի ընթացքում քննարկվել են միջազգային անվտանգությանը, տարածաշրջանային սպառնալիքներին, գլոբալ տնտեսական խնդիրների հետևանքներին, կլիմայական փոփոխություններին և էներգետիկ քաղաքականությանը, նավթ արդյունահանող երկրների դերին, բազմամշակութայնությանը, միջկրոնական երկխոսությանը և փոխադարձ ինտեգրացիային, էթնիկ, կրոնական և քաղաքական հողի վրա առաջացող խնդիրներին, ժողովրդավարությանը, կրթության և բնապահպանությանն առնչվող հարցեր:

Ֆորումին մասնակցել են մեծ թվով օտարերկրյա նախկին և ներկա բարձրաստիճան պաշտոնյաներ, միջազգային կառույցների ղեկավարներ,

հայտնի քաղաքական գործիչներ, փորձագետներ, այդ թվում՝ Բուլղարիայի, Վրաստանի, Ալբանիայի, Մակեդոնիայի նախագահները, Լեհաստանի, Ֆինլանդիայի և Լատվիայի նախկին նախագահները, Իսրայելի նախկին վարչապետ Էհուդ Բարաքը, ՌԴ Արտաքին հետախուզական ծառայության նախկին տնօրեն Վ.Տրուբնիկովը: Հատկանշական է Վրաստանի նախկին նախագահ Մ.Սաակաշվիլու քաղաքական թիմի ներկայացուցչական մասնակցությունը ֆորումին՝ ի դեմս նախկին վարչապետ Ն.Գիլաուրիի, «Ազգային շարժում» խորհրդարանական խմբակցության նախագահ Գ.Գաբաշվիլու և Վրաստանի ենթակառուցվածքների նախկին նախարար Ռ.Նիկոլաշվիլու:

ԻՐԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
2016թ. մարտ

Ռոման Կարապետյան*

Իրանի Իսլամական Հանրապետության համար 2016թ. մեկնարկը նշանավորվեց երկու կարևոր իրադարձություններով, որոնք իրենց կնիքը դրեցին երկրի արտաքին քաղաքական գծի հետագա զարգացումների վրա: Հունվարի 16-ին արձանագրվեցին «վեցնյակի երկրների» և Իրանի միջև բանակցությունների առաջին դրական արդյունքները՝ ազդարարելով Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների վերացման մեկնարկը: Մյուս իրադարձությունը կապված է Իրանում երկու բարձրագույն կառավարման մարմինների՝ Փորձագիտական խորհրդի և Մեջլիսի ընտրությունների հետ, որոնց առաջին փուլն անցկացվեց փետրվարի վերջին օրերին:

Տեղեկանք. 2005թ., երբ Իրանն ակտիվացրել էր իր միջուկային հարստացման ծրագրերը, վերջինիս վրա միջազգային պատժամիջոցներ էին կիրառվել: Միջուկային հարցերով Իրանի հետ բանակցելու համար 2015թ. հուլիսին կազմվել էր «վեցնյակի խումբը» (ԱՄՆ, Ռուսաստան, Չինաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա): Բանակցությունների արդյունքում Իրանը պարտավորվել է առնվազն 10 տարով սառեցնել իր միջուկային հարստացման ծրագրերը և կրճատել խաղաղ միջուկային ծրագրերը՝ դրանք դնելով Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) վերահսկողության ներքո: Տարվա վերջին ԱԷՄԳ-ն արձանագրեց, որ Իրանը կատարում է ստանձնած պարտավորությունները, ինչի արդյունքում հանվեց Իրանի պատժամիջոցների մի մասը: Իրանը հնարավորություն ստացավ տիրապետելու իր $107 մլրդ-ի չափով սառեցված արտասահմանյան ակտիվներին, որից 29 մլրդ-ին՝ անմիջապես, օրական արտահանելու մինչև 0,5 մլն բարել նավթ: Սակայն ԱՄՆ-ը և ԵՄ-ը պահպանեցին այն պատժամիջոցները, որոնք վերաբերում են Իրանին զենք վաճառելուն, ինչպես նաև Իրանի այն քաղաքա-

---

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, պ.գ.թ.:

ցիներին, ովքեր կասկածվում են մարդու իրավունքների ոտնահարման և ահաբեկչական խմբավորումների հետ կապ պահելու մեջ: Այդ ցուցակի մեջ ներառվեցին 29 անձ և 94 ընկերություն՝ նախկին 64-ի և 373-ի դիմաց՝ համապատասխանաբար:

Միջազգային պատժամիջոցների մի մասի չեղարկումից հետո Իրանը կտրուկ ակտիվացրել է արտաքին քաղաքականությունը: Ամսվա ընթացքում երկրի քաղաքական օրակարգում առաջնային տեղ են զբաղեցրել հարաբերությունները միջազգային ուժային կենտրոնների, իսլամական աշխարհի, խոշոր տնտեսական և քաղաքական գործընկեր երկրների հետ:

Իրան-ԱՄՆ, միջազգային պատժամիջոցներ - Երկու երկրների միջև փոխհարաբերությունները, չնայած ձեռք բերված պայմանավորվածություններին, շարունակում են լարված մնալ: Մարտի սկզբին ԱՄՆ-ն սկսեց վերադարձնել դեռևս 35 տարի առաջ զենքի գնման համար Իրանի կողմից փոխանցված գումարի մի մասը՝ $1,7 մլրդ-ի չափով: ԱՄՆ նախագահ Բ.Օբաման թույլատրեց ամերիկյան ավիաընկերություններին քաղաքացիական օդանավեր վաճառել Իրանին: Երկու երկրների հարաբերությունների ջերմացման հաջորդ փորձը նույնպես ԱՄՆ նախաձեռնությամբ էր. Բ.Օբաման տեսաշնորհավորանք հղեց իրանցիներին Նովրուզի կապակցությամբ՝ համոզմունք հայտնելով, որ բացառիկ հնարավորություն է ստեղծվել զարգացնելու երկու երկրների միջև փոխհարաբերությունները: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց մարտի 8-ին և 9-ին Իրանում մինչև 2000 կմ հեռահարությամբ բալիստիկ հրթիռների հաջող փորձարկումից հետո: Բ.Օբաման հայտարարեց, որ դրանով Իրանը խախտում է ստանձնած պարտավորությունները, և հարցը պետք է քննարկվի ՄԱԿ Անվտանգության խորհրդում: ԱՄՆ-ը ևս մեկ տարով երկարաձգեց Իրանի նկատմամբ պատժամիջոցները, որոնք նախատեսում էր հանել մարտի կեսերին: Պաշտոնական Թեհրանը դժգոհ է իր նկատմամբ ԱՄՆ վարած քաղաքականությունից: Իրանի հոգևոր առաջնորդ և երկրի փաստացի ղեկավար Ա.Խամենեին հանդես եկավ ԱՄՆ-ի նկատմամբ կոշտ քննադատություններով: Նա նշել է, որ Իրանը չպետք է բացառի ԱՄՆ-ի կողմից սպառնալիքները: Ավելի ուշ նա կարծիք է հայտնել, որ ԱՄՆ-ի և Իրանի միջև ուղիղ բանակցություններն անհնար են. «ԱՄՆ-ը շարունակում է դժվարություններ ստեղծել Իրանի համար, որոնք արտահայտվում են ինչպես բանկային ոլորտում, այնպես էլ Իրանի սառեցված ակտիվների վերադարձի հար-

ցում»,- ասել է Խամենեին: Այնուհետև պաշտոնական Թեհրանը ներկայացնող տարբեր տրամաչափի գործիչներ խոսեցին այն մասին, որ Իրանը շարունակելու է զարգացնել իր հրթիռային համակարգը՝ միևնույն ժամանակ ընդգծելով, որ դրանով նրանք չեն խախտում ստանձնած պարտավորությունները, և այդ ծրագրերն ունեն բացառապես խաղաղասիրական նպատակներ և միտված են երկրի պաշտպանունակության բարձրացմանը: Իրանի հրթիռային փորձարկումների վերաբերյալ ՄԱԿ գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հայտարարեց, թե Իրանը պետք է զգույշ լինի նմանատիպ փորձարկումներ անելիս, քանի որ դրանք կարող են ապակայունացնել տարածաշրջանը: Դրանք անարձագանք չթողեցին նաև վեցնյակի մյուս երկրները: ՄԱԿ-ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Վ.Չուրկինը հայտարարեց, թե դրանով Իրանը չի խախտել պայմանավորվածությունները, և հարցը Անվտանգության խորհրդում քննարկելու կարիք չկա: Ավելի ուշ Եվրոպական միության արտաքին հարցերով գլխավոր հանձնակատար Ֆ.Մոգերինին նույնպես հայտարարեց, թե Իրանը հավատարիմ է իր ստանձնած պարտավորություններին: Եվրոպական երկրներից առավել խիստ քննադատությամբ հանդես եկավ պաշտոնական Բեռլինը՝ այն համարելով ՄԱԿ կոնվենցիաների խախտում:

Սպառազինությունների ծավալների մեծացման հարցում Իրանի պաշտոնական շրջանակներում կա տեսակետների որոշակի տարամետություն: Երկրի հոգևոր առաջնորդ Ա.Խամենեին այս առիթով ասել է. «Մենք բանակցում ենք և միևնույն ժամանակ՝ զարգացնում մեր սպառազինությունները: Դրանք փոխկապակցված են, և մենք չենք կարող մեր անվտանգությունն ապահովել առանց մեկը մյուսի: Թեպետ մեր վրայից պատժամիջոցները հանվում են, բայց դրանք մնում են թղթի վրա, և մենք չենք տեսնում դրանց արդյունքները»: Այս հայտարարությունից հետո Իրանի նախկին նախագահ, ինչպես նաև ներկա նախագահի համակիր Ա.Ռաֆսանջանին իր թվիթերյան էջում հետևյալ գրառումն էր արել. «Իրանի ապագան երկխոսության մեջ է, այլ ոչ՝ հրթիռների»: Սակայն այս գրառումը շատ արագ հեռացվել էր:

Պաշտոնական Թեհրանն ակտիվորեն քննադատում է նաև Մերձավոր Արևելքում ԱՄՆ վարած քաղաքականությունը: Ա.Խամենեին հայտարարել է, թե ԱՄՆ-ը դատապարտում է իրենց հրթիռային փորձարկումները, մինչդեռ ինքը լայնամասշտաբ զորավարժություններ է իրականացնում մի տարածաշրջանում, որտեղ պատասխանատվություն չի կրում: Պաշտոնական Թեհրա-

նը հասկանալ տվեց ԱՄՆ-ին, որ եթե վերջինս Իրանը ճանաչի որպես տարածաշրջանի հիմնախնդիրների հիմնական մեղավորի և սկզբնաղբյուրի, դա անխուսափելիորեն կարող է բերել Իրանի և Սաուդյան Արաբիայի միջև կրոնական հակամարտության սրման և տարածաշրջանի ապակայունացման: Դրանից հետո Բ.Օբաման հայտարարեց, թե Թեհրանն ու Էր Ռիադը տարածաշրջանում շահերի բաժանման գոտիները հստակեցնելու համար իրենք պետք է ուղիներ գտնեն: Երկու երկրների միջև սառույցի հալմանը չեն նպաստում նաև ԱՄՆ ներքաղաքական զարգացումները: Երկրի նախագահական ընտրարշավի հիմնական առաջատարներ Դ.Թրամփը, Թ.Քրուզն իրենց նախընտրական ելույթներում խիստ քննադատության են ենթարկում Իրանին և խոստանում ընտրվելու դեպքում չեղարկել վերջինիս հետ ձեռք բերված պայմանավորվածություններն ու վերականգնել պատժամիջոցները: ԱՄՆ-ում Իրանցիների խորհուրդը հայտարարեց, թե պաշտպանում է Հիլարի Քլինթոնի թեկնածությունը: Այս հայտարարությունից ընդամենը մեկ օր անց Հ.Քլինթոնը Վաշինգտոնում սիոնիստական լոբբիստական հայտնի խմբերից մեկի (*AIPAC*) առջև ելույթի ժամանակ ասաց, որ ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում պետք է հետևի Իսրայելի շահերին, ուստի պետք է մշտապես վերահսկի Իրանին և անհրաժեշտության դեպքում նոր պատժամիջոցներ կիրառի: Թեհրանից պատասխանը չուշացավ. Ա.Խամենեին հայտարարեց, թե ԱՄՆ նախագահի բոլոր թեկնածուները Իրանի թշնամիներն են, քանի որ նրանք իրենց քարոզչությունը տանում են Իրանին սևացնելու միջոցով:

Մարտի 24-ին ԱՄՆ-ը պատժամիջոցների մեջ ներառեց նաև իրանական 6 ընկերությունների, որոնք ուղիղ կապ ունեին հրթիռային փորձարկումների հետ:

Իրան-Ռուսաստան, սպառազինություններ - Ռուսաստանի հետ Իրանի հարաբերությունները մնում են ռազմավարական գործընկերության մակարդակում: Երկու երկրները դաշնակցում են սիրիական և տարածաշրջանային այլ հարցերում: Փետրվարի վերջին Ռուսաստանը որոշում կայացրեց դադարեցնել ռազմական գործողությունները Սիրիայում և հանել զորքերն այնտեղից: Պաշտոնական Թեհրանն այս փաստին դրականորեն արձագանքեց՝ այն դիտարկելով որպես Սիրիայում կայունության հաստատմանն ուղղված կարևոր քայլ, թեպետ Իրանի պաշտոնական որոշ շրջանակներ Ռուսաստանի այս քայլը որակեցին ռազմավարական գործընկերությանը ոչ համահունչ՝ դրանով ցույց տալով, որ այդ քայլն ամբողջությամբ համաձայնեցված չի եղել

Իրանի հետ: Ավելի ուշ Իրանի նախագահ Հասան Ռոհանին հայտարարեց, որ իրենք Սիրիայում վարում են Ռուսաստանից անկախ քաղաքականություն: Այս հայտարարությունով պաշտոնական Թեհրանը փորձեց կասեցնել արևմտյան բազմաթիվ լրատվամիջոցների մեղադրանքներն այն մասին, որ Իրանը Սիրիայի հարցում անվերապահորեն կատարում է Մոսկվայի որոշումները:

Երկու երկրները հիմնականում համագործակցում են ռազմատեխնիկական ոլորտում: Մինչև փետրվարի վերջ Իրանը բանակցում էր Ռուսաստանի հետ նրանից T-90 տեսակի տանկեր ձեռք բերելու համար, սակայն հետագայում հայտարարեց, որ ունակ է այս ոլորտում պահանջները բավարարել սեփական ռեսուրսների հաշվին: Բանակցությունները հիմնականում ընթանում էին C-300 հակաօդային պաշտպանության համակարգեր ձեռք բերելու շուրջ: Նախատեսվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր պայմանավորված քանակությամբ համակարգեր հասցնել Իրան: Մարտի 11-ին Ռուսաստանն ամբողջությամբ հանեց Իրանի նկատմամբ պատժամիջոցները: Չնայած ռազմավարական գործակցությանը՝ երկու երկրներն ունեն թույլ զարգացած տնտեսական հարաբերություններ: Նրանց միջև առևտրաշրջանառության ծավալը կազմում է $2 մլրդ: Մարտին քայլեր են ձեռնարկվել տնտեսական, հատկապես՝ էներգետիկ ոլորտում համագործակցության զարգացման ուղղությամբ: Երկու երկրները պայմանավորվածություն ունեն 1400 մվտ հզորությամբ ջերմաէլեկտրակայան կառուցելու վերաբերյալ:

Իրանն ակտիվորեն արդիականացնում և ավելացնում է իր սպառազինությունները: Երկրի ռազմածովային ուժերի հրամանատարը հայտարարել է նոր և ավելի մեծ բեռնատարողությամբ ռազմական նավերի արտադրության և միջազգային ջրեր բաց թողնելու մասին: Նախատեսվում է այս առումով ներկայանալի լինել Ատլանտյան, Խաղաղ և Հնդկական օվկիանոսներում: Հրթիռային համակարգերի արդիականացման առաջին փուլի ավարտը նախատեսվում է 2017թ. գարնանը: Նախատեսվում է նաև լայնամասշտաբ զորավարժություններ անցկացնել ցամաքում, օդում և ջրում: Այս հայտարարություններից հետո պաշտոնական Թեհրանը վստահեցնում է, որ երբևէ մտադիր չէ կիրառել միջուկային, քիմիական կամ կենսաբանական զենք:

Իրան-Մերձավոր Արևելք - Տարածաշրջանի երկրների հետ Իրանի հարաբերությունները չի կարելի դասել ձևավորվածների շարքին: Այստեղ հիմնականում բախվում են Իրանի, Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի և Իսրայելի

շահերը: Իրանի հրթիռային փորձարկումներից անմիջապես հետո Իսրայելի վարչապետ Բ.Նեթանյահուն հայտարարեց, թե պետք է խստագույնս պատժել վերջինիս: Իրավիճակն էլ ավելի սրեց Իսլամական հեղափոխության պահպանման էլիտար ստորաբաժանման ղեկավարի այն հայտարարությունը, թե փորձարկված հրթիռների համար հասանելի են ներկայում Իսրայելի կողմից վերահսկվող տարածքները:

Արաբական աշխարհի և Իրանի միջև հակասությունները, պարզ է, բազմաթիվ են: Մարտի 2-ին Իրանի ԱԳՆ մամուլի խոսնակ Հ.Անսարին ասել է, թե արաբական որոշ երկրներ պետք է վերջ տան իրանաֆոբիային, քանի որ դա տարածաշրջանին խաղաղություն չի բերի: Սաուդյան Արաբիայի հետ հարաբերություններում լարվածության նոր փուլի մեկնարկը դրվել էր դեռ տարվա սկզբին, երբ Էր Ռիադում մահապատժի էին ենթարկվել շիա մահմեդական քարոզիչներ: Դրան հետևել էր Թեհրանում Սաուդյան Արաբիայի դեսպանատան վրա հարձակումը, որից հետո Սաուդյան Արաբիան և ևս 4 սուննի մահմեդական երկրներ սառեցրել էին դիվանագիտական հարաբերություններն Իրանի հետ: Այնուհետև Պարսից ծոցի երկրների խորհուրդը, որի մեջ մտնում են 6 սուննի մահմեդական և Սաուդյան Արաբիայի քաղաքական տանիքի տակ գտնվող երկրներ, Լիբանանում հիմնական քաղաքական կառավարման լծակներին տիրապետող և Իրանից սնվող «Հըզբոլլա» կազմակերպությունը հռչակեցին ահաբեկչական խմբավորում: Մարտի 24-ին Իրանին և «Հըզբոլլա» շարժմանն աջակցող ելույթից հետո Սաուդյան Արաբիայում ձերբակալվեց ևս մեկ հայտնի շիա քարոզիչ: Մարտի վերջին Սաուդյան Արաբիան հրաժարվեց վիզա տրամադրել Իրանի պատվիրակներին Էր Ռիադում անցկացվող Իսլամական կոնֆերանս կազմակերպության համաժողովին մասնակցելու համար:

Մարտի 5-6-ին պաշտոնական այցով Թեհրան ժամանեց Թուրքիայի վարչապետ Ա.Դավութօղլուն: Այցը հիմնականում տնտեսական բնույթ էր կրում: Թուրք պաշտոնյան կարծիք հայտնեց, թե երկու երկրների միջև որոշակի քաղաքական տարաձայնությունները չպետք է ազդեն նրանց տնտեսական փոխհարաբերությունների վրա: Ա.Դավութօղլուն շեշտադրել է նաև, որ Թուրքիան շարունակել է մնալ Իրանի բարեկամն ու սատարել է նրան նաև միջազգային պատժամիջոցների գոյության ժամանակ: Կարծում ենք, Թուրքիան փորձում է մնալ Իրանի համար որպես կարևոր տնտեսական գործընկեր, քանի որ պատժամիջոցների չեղարկումից հետո Իրանի արտաքին տնտեսական

հնարավորությունները զգալիորեն մեծացել են: Գաղտնիք չէ, որ Թուրքիայի հետ Իրանի տնտեսական կապերը մեծապես պայմանավորվում էին նաև Իրանի նկատմամբ միջազգային պատժամիջոցների առկայությամբ: Իսկ ինչ վերաբերում է ՌԴ-Թուրքիա հարաբերություններին, Իրանը հայտարարել է, թե չեզոք դիրք է զբաղեցնում: Այցի ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց երկկողմ առևտրաշրջանառության ծավալներն առաջիկա երկու տարիների ընթացքում հասցնել $30 մլրդ-ի: Մարտի 20-ին Իրանի ԱԳ նախարար Մ.Զարիֆը պատասխան այցով եղավ Անկարայում: Խոսելով թուրք-իրանական հարաբերությունների զարգացման մասին՝ նա շեշտադրեց, որ դրանք կարևոր ազդակ կարող են լինել մահմեդական աշխարհի, հատկապես՝ շիաների և սուննիների համերաշխության տեսանկյունից:

Տեղեկանք. Երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները կտրուկ նվազել էին 2015թ. ընթացքում՝ նախորդ տարվա 13,7 մլրդ-ի փոխարեն իջնելով 9,7 մլրդ ցուցանիշի: Հիմնական պատճառը Սիրիայում զարգացումների հետևանքով թուրք-իրանական հարաբերությունների սրացումն էր: Միևնույն ժամանակ, այս ցուցանիշի զգալի հատվածն ապահովվում է Իրանից Թուրքիա ներկրվող գազի հաշվին:

Պակիստանի հետ նոր մակարդակի հարաբերությունների հիմքերը դրվեցին Իրանի նախագահ Հ.Ռոհանիի՝ մարտի 25-ին Իսլամաբադ կատարած այցով: Հ.Ռոհանին Պակիստանի իր գործընկերոջ հետ հանդիպման ժամանակ ընդգծեց, որ երկու երկրների միջև հարաբերությունները ռազմավարական են: Պակիստանը, որպես տարածաշրջանային միջուկային պետություն, կարևոր դերակատարում ունի անվտանգության և կայունության հաստատման ամրապնդման գործում: Երկու երկրների ղեկավարները ստորագրեցին մի շարք միջպետական փաստաթղթեր, որոնք վերաբերում են արտաքին քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային, առողջապահական ոլորտներին: Կողմերը համաձայնություն ձեռք բերեցին նաև առևտրաշրջանառության ծավալները մոտ ապագայում հասցնել $5 մլրդ-ի: Կողմերը պայմանավորվել են նաև արագացնել դեռևս 2013թ. մեկնարկած Իրան-Պակիստան գազամուղի շինարարությունը, որի իրանական հատվածի աշխատանքներն ավարտվել են դեռևս 2015թ.:

Իրան-Ասիա - Մարտի սկիզբը նշանավորվեց Իրանի և Հարավարևելյան Ասիայի երկրների միջև հարաբերությունների բուռն զարգացումներով: Մար-

տի 5-ին Իրանի ԱԳՆ պատվիրակությունն այցելեց տարածաշրջանի 6 երկիր՝ Ինդոնեզիա, Թայլանդ, Բրունեյ, Նոր Զելանդիա, Սինգապուր, Ավստրալիա: Հնդկաստանի պաշտոնական աղբյուրները հայտարարեցին, թե երկիրը հետաքրքրված է Իրանից գազի ներմուծմամբ և նախատեսում է 1400 կմ երկարությամբ գազատարի կառուցման վերաբերյալ համաձայնության գալ Թեհրանի հետ: Մետալուրգիայի և էներգետիկայի ոլորտներում համագործակցության զարգացման վերաբերյալ հուշագիր է ստորագրվել Իրանի և Չինաստանի միջև: Հիշեցնենք, որ Չինաստանը ներկայում Իրանի ամենախոշոր տնտեսական գործընկերն է Ասիայում՝ շուրջ $40 մլրդ-ի չափով առևտրաշրջանառության ծավալներով: Պաշտոնական Սեուլը վերականգնում է Իրանի հետ ավիափոխադրումները և պայմանավորվածություններ ձեռք բերում միջուկային ոլորտում համագործակցությունը զարգացնելու վերաբերյալ: Ներկայում երկու երկրների միջև առևտրաշրջանառության ծավալները հասնում են $10 մլրդ-ի: Ասիական տնտեսական մեկ այլ հսկայի՝ Վիետնամի հետ հարաբերությունների նոր փուլի մեկնարկն էլ դրվեց վերջինիս նախագահի Թեհրան կատարած այցի ընթացքում: Վիետնամը հայտարարել է, թե ճանաչում է խաղաղ նպատակներով իրագործվող Իրանի միջուկային ծրագրերը: Կողմերը պայմանավորվել են առաջիկա 5 տարիների ընթացքում առևտրաշրջանառության ծավալները 350 մլն-ից հասցնել $2 մլրդ-ի: Ասիական տնտեսական հսկաներից միայն Ճապոնիան է, որ չի շտապում բարելավել հարաբերություններն Իրանի հետ:

Իրան-Եվրոպա - Մարտի 6-ին իսպանական նավահանգիստներից մեկը ժամանեց 1 մլն բարել իրանական նավթով բեռնված առաջին նավը: Իրանը նավթի մատակարարման վերաբերյալ պայմանավորվածություններ է ձեռք բերել նաև Ուկրաինայի և Հունաստանի հետ: Ֆրանսիական *Total* նավթային ընկերությունը բանակցություններ է վարում Իրանի նավթային ընկերությունների հետ հետագա գործակցության ծրագրերի մշակման շուրջ: Ամսվա ընթացքում հատկապես ակտիվ էին քաղաքական շփումները Բելառուսի, Ռումինիայի հետ, որոնք Եվրոպայում Իրանի առանցքային տնտեսական գործընկերներից են: Շվեյցարիայի նախագահը գոհունակություն է հայտնել երկու երկրների հարաբերությունների զարգացման տեմպերից, իսկ Մեծ Բրիտանիայի արքայազն Չարլզը մտադրություն է հայտնել այցելել Իրան: Մար-

տի 30-31-ին նախատեսված էր Իրանի նախագահի այցն Ավստրիա, սակայն անվտանգության միջոցառումներից ելնելով՝ այն հետաձգվել է: Ամսվա ընթացքում եվրոպական երկրների հետ շփումներն ակտիվության մակարդակով ակնհայտորեն զիջել են Իրանի արտաքին քաղաքական մյուս վեկտորներին և հիմնականում պայմանավորված են եղել միջուկային ծրագրերի վերաբերյալ համաձայնագրերի շուրջ քննարկումներով ու պատժամիջոցների վերացմամբ:

Իրան-Հարավային Կովկաս - Հարավային Կովկասն Իրանի արտաքին քաղաքականության օրակարգում ունի կարևոր նշանակություն, ինչի մասին մեկ անգամ չէ, որ հայտարարել է պաշտոնական Թեհրանը: Տարածաշրջանն Իրանի համար ունի առավելապես տարանցիկ տնտեսական նշանակություն:

Տեղեկանք. 2015թ. դեկտեմբերին Երևանում Հայաստանի, Իրանի, Ռուսաստանի և Վրաստանի միջև ստորագրվել է էներգետիկ ոլորտում համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր: Նախատեսվում է մինչև 2018թ. Հայաստան-Վրաստան 400 կվտ հզորությամբ էլեկտրահաղորդակցության գիծ կառուցել: Նախատեսված է նաև մինչև 2021թ. էլեկտրաէներգիայի փոխադարձ հոսքերի հզորությունը հասցնել մինչև 70 մվտ-ի: Ընթացիկ տարվա հունվարին Իրան-Հայաստան-Վրաստան գազամուղի կառուցման վերաբերյալ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել երեք երկրների միջև:

Իրանն ունի առավել ընդգծված հարաբերություններ Ադրբեջանի հետ, ինչն առաջին հերթին պայմանավորված է կրոնական և տնտեսական կապերով: Ամսվա ընթացքում երկու երկրների պաշտոնական շփումների օրակարգում հիմնականում եղել են սահմանային անվտանգության, առողջապահական հարցերը: Ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանը չի թմբկահարում Իրանի հետ հարաբերությունները, ինչն առաջին հերթին պայմանավորված է Իրանում ապրող մեծաքանակ ադրբեջանական համայնքի առկայությամբ և տարածաշրջանում հավասարակշռության ապահովմանն ուղղված Իրանի արտաքին քաղաքականությամբ: Մարտին Իրանում ՀՀ դեսպան Ա.Թումանյանը հանդիպել է Թեհրանի նահանգապետ Հ.Խաշեմիի հետ, որի ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացիական ավիացիայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության զարգացման վերաբերյալ: Իրանի տրանսպորտի նախարարը Իրան-Բուլղարիա

տնտեսական համաժողովի ժամանակ խոսել է Իրան-Հայաստան-Վրաստան-Բուլղարիա-Հունաստան տրանսպորտային միջանցքի գործարկման անհրաժեշտության մասին:

Իրան-Ամերիկա, Աֆրիկա - Իրանն Ամերիկայի երկրներից ամենասերտ կապերն ունի Բրազիլիայի հետ: Ընթացիկ ամսում Իրանը վերջինիս հետ պայմանավորվածություն է ձեռք բերել քաղաքացիական օդանավերի գնման հարցում:

Մարտի 16-ին Իրանի արտգործնախարարի արաբ-աֆրիկյան հարցերով տեղակալը հանդիպել է աֆրիկյան երկրների դեսպանների հետ և հայտնել, որ պաշտոնական Թեհրանը վերանայում է աֆրիկյան երկրների հետ հարաբերությունների ռազմավարությունը: Որպես առաջին քայլ նախատեսվում է կազմակերպել տարաբնույթ պաշտոնական այցեր աֆրիկյան երկրներ, իսկ հարաբերությունների որակը նոր մակարդակի բարձրացնել առաջիկա 5 տարիների ընթացքում:

Աղբյուրներ՝

www.en.mfa.ir
www.aljazeera.com
www.presstv.com
www.tass.ru
www.iran.ru
www.vestikavkaza.ru
www.iranchamber.com
www.bbc.com
www.theguardian.com
www.telegraph.co.uk
www.inosmi.ru
www.ria.ru
www.panarmenian.net
www.razm.info
www.mepc.org
www.rbc.ru

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՏ. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սամվել Մարտիրոսյան[*]

Ապրիլի 2-ից Ադրբեջանի սանձազերծած մարտական գործողությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ուղեկցվում էին տեղեկատվական գործողություններով, որոնց ընթացքում ակնհայտ դարձավ, որ ադրբեջանական քարոզչությունը ներքին լսարանի համար յուրահատուկ մեթոդներով է գործում: Լրատվամիջոցների վերահսկելիությունն այնքան մեծ է, որ իշխանությունները կարողանում են իրականացնել լիարժեք վիրտուալ պատերազմ վիրտուալ հաղթանակներով:

Ադրբեջանի ներքին հասարակական, քաղաքական կյանքն այսօր փաստացի գտնվում է այն վիճակում, երբ ընդդիմությունը բացակայում է, լրատվամիջոցները նախագահականի կողմից վերջնականորեն վերցվել են վերահսկողության տակ, հասարակական կազմակերպությունների մեծ մասը նրանից անմիջականորեն ղեկավարվող կառույցներ են:

Այս վիճակում ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերվա ադրբեջանական ագրեսիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ առաջին ժամերին բացարձակապես չէր ուղղորդվում տեղեկատվական ոլորտում: Այն դեպքում, երբ ապրիլի 2-ի առավոտյան արդեն ոչ միայն հայաստանյան, այլ նաև միջազգային մամուլն էր իրավիճակն ակտիվորեն ներկայացնում որպես պատերազմական, Ադրբեջանում լրատվամիջոցները մինչև կեսօր ընդհանրապես լռում էին, կարծես ոչինչ չէր կատարվում: Փաստացի, օրվա երկրորդ կեսին միայն ադրբեջանական մամուլը և պետական կառույցները սկսեցին արձագանքել: Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը նույնիսկ հայտարարեց, որ ՌԴ ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովից է իմացել, որ շփման գծում վիճակը սրվել է:

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ:

Ադրբեջանական լրատվամիջոցների, պետական կառույցների լռությունը հարձակման առաջին ժամերին, ամենայն հավանականությամբ, կապված է հենց տեղեկատվական հոսքերի գերվերահսկելիության հետ: Քանի որ Ադրբեջանում մամուլը վերջին տարիներին դարձել է գրեթե լիովին վերահսկելի Ալիևի ռեժիմի կողմից, ապա լրատվամիջոցները գերադասում են ինքնուրույն չլուսաբանել ռազմական թեմաները[1]: Այդ պատճառով, երբ ապրիլի 2-ին ադրբեջանական պլաններն արդեն ձախողվել էին, մամուլը չուներ հստակ հրահանգ, թե ինչպես լուսաբանել իրավիճակը: Այդ պատճառով էլ լուսաբանում չէր իրականացվում, մինչև որ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունն ընտրեց մոտեցումներ և դրանք հրապարակեց, ինչն էլ ուղեցույց դարձավ նաև լրատվամիջոցների համար:

Պատերազմական գործողությունների ընթացքում Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը շարունակում էր նույն գործը, որը որդեգրվել էր վերջին երկու տարիների ընթացքում. հնարավորինս թաքցնել սեփական կորուստները, չհրապարակել զոհված զինվորականների անձնական տվյալները: Որպես հետևանք՝ ներքին լսարանի համար ստեղծվում էր այնպիսի տպավորություն, թե հիմնականում կորուստներ կան միայն հայկական կողմից: Կորուստների մասին տեղեկատվություն սոցիալական ցանցերի միջոցով փորձում էին գտնել ընդդիմադիր *Meydan TV* լրատվամիջոցի (աշխատում է Բեռլինից) լրագրողները:

Ընդհանուր պատերազմական հաղթող ներկայանալու ցանկությունն Ալիևի ռեժիմի կողմից սկսեց դրսևորվել արդեն հրադադարի հայտարարման պահից՝ վերահսկելի լրատվամիջոցներով: Լրագրողների միջոցով բանակը սկսեց ներկայացնել բացարձակ հորինված, թատերականացված նյութեր, որտեղ ցուցադրվում էին Լեռնային Ղարաբաղի գյուղեր և քաղաքներ, որոնք, իբր, գտնվում են ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ: Այսպես, *ANS PRESS* հեռուստաընկերությունը ռեպորտաժներ է ներկայացրել իբր Թալիշ գյուղից, չնայած արտասահմանյան լրագրողները հայկական կողմից արդեն այցելել էին բնակավայր՝ համոզվելով, որ այն հայկական կողմի վերահսկողության տակ է (տե՛ս *Նկար 1*)[2]:

[1] Details about Azerbaijan. Reporters Without Borders, https://index.rsf.org/#!/index-details/AZE
[2] Ağdarə rayonu Talış kəndinin ünvanını göstərən lövhə basdırıldı, https://www.youtube.com/watch?v=HmxVL2dk87s

Հետագայում մամուլով սկսեցին տարածվել նյութեր, որոնք կոչված էին ապացուցելու, թե, իբր, ադրբեջանական բանակը գրավել է Ֆիզուլի, Ջաբրայիլ քաղաքները (տե՛ս *Նկար 2*)։ Որպես փաստեր կեղծելու գործիք օգտագործվում էին ադրբեջանական կողմում գտնվող մարզային ցուցանակները։ Չնայած սոցցանցերի մոնիթորինգը ցույց է տալիս, որ ադրբեջանական օգտատերերի մեծամասնությունն էյֆորիայի մեջ է, սակայն արդեն կարելի է տեսնել օգտատերերի, որոնք սկսել են հասկանալ սեփական մամուլի և ՊՆ մանիպուլյացիաների ոճը (տե՛ս *Նկար 3*)։

Ընդհանուր առմամբ, այսօր Ադրբեջանի հասարակության վրա տոտալ վերահսկվող լրատվամիջոցներով իրականացվող մանիպուլյատիվ ազդեցությունը թույլ է տալիս Ալիևի վարչակազմին լուծել կարճաժամկետ խնդիրներ և որպես լուրջ ռազմական հաղթանակ ներկայացնել իրավիճակը։ Երկարաժամկետ ընթացքում նման գործողությունները կարող են հակառակ արդյունք տալ և բնակչությանը թերահավատ դարձնել բոլոր տիպի ռազմական նորությունների հանդեպ։

Նկար 1

ANS PRESS հեռուստաընկերության ռեպորտաժն իբր գրավված Թալիշ գյուղից

Նկար 2

Ադրբեջանական բանակն իմիտացնում է Ֆիզուլիի գրավումը

Նկար 3

Ադրբեջանցի օգտատերը բացահայտում է ներքին քարոզչությունը



«ՀԱՅԱՍՏԱՆ» ԻԴԵՈԼՈԳԵՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Մարիամ Խալաթյան[*], *Դիանա Գալստյան*[**]

Լրատվամիջոցների կողմից տարածվող արժեքների, իդեոլոգեմների[1] բացահայտման նպատակով 2011թ. սկսած՝ մենք իրականացրել ենք ՀՀ տեղեկատվական դաշտի բովանդակության ուսումնասիրություններ: Մեդիայի մատուցած իդեոլոգեմները հետագայում կարող են դառնալ հանրության գիտակցության բաղադրիչը և այդպիսով էապես ազդել Հայաստանում ընթացող հասարակական զարգացումների վրա: Ուստի, մեր հետազոտության նախնական նպատակն էր ՀՀ տեղեկատվական տարածքի արժեքային բովանդակության, գերակայող արժեքների և իդեոլոգեմների ցուցանիշների ուսումնասիրությունը, իսկ վերջին (2015թ.) ուսումնասիրության նպատակն էր դրանցում հնարավոր փոխակերպումների բացահայտումը:

Այս հոդվածում կանդրադառնանք *«Հայաստան»* իդեոլոգեմի որակական բնութագրիչներին, լրատվամիջոցների կողմից դրանց իմաստավորման համատեքստերին, հուզական երանգավորման կշիռներին և առանձնահատկություններին: «Հայաստան» բառն ամենից հաճախ հանդիպող կոնցեպտներից է հայկական մեդիատիրույթում: Սակայն հետազոտական տեսանկյունից այն հետաքրքիր է ոչ միայն քանակական ներկայացվածության, այլև իր, այսպես կոչված, «սովորականության» պատճառով: Ասել է թե՝ մենք հաճախ չենք անդրադառնում, թե ինչ և ինչպես ենք խոսում այնպիսի առօրյա դարձած գաղափարի մասին, ինչպիսին «Հայաստանն» է: Եվ հենց այս պատճառով հետաքրքիր է կանգ առնել «Հայաստան» գաղափարի մեդիակիրառության դեպքերի վրա՝ դիտարկելու դրա շուրջ իմաստների ձևավորման գործընթացի առանձ-

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:

[1] Իդեոլոգեմը կարելի է սահմանել որպես գաղափարախոսական ուղերձ կրող միավոր, որը ճանաչելի է որպես ամրագրված բառ, արտահայտություն, ունի հուզաարժեքային ասպեկտ, հանդես է գալիս բնորոշ համատեքստում կամ ասոցիատիվ կերպով առաջ է բերում անհրաժեշտ համատեքստը: Այսպիսով, այն խտացնում է որոշակի ասելիք և վերջինիս «կարճ անվանումն» է հանդիսանում, http://www.noravank.am/upload/pdf/Idelogeme.pdf

նահատկությունները: Մենք այդպիսի դիտարկում ենք իրականացրել 2015թ. Հայաստանի մեդիադիսկուրսի իդեոլոգեմների ուսումնասիրության շրջանակում[2], որտեղ որպես իդեոլոգեմ՝ գաղափարական-արժեքային ծանրաբեռնվածություն և տարբեր իմաստավորումներ կրող կոնստրուկտ ենք դիտարկել նաև «Հայաստան» գաղափարը: Քանի որ նույն մեթոդաբանությամբ հետազոտություն իրականացվել է նաև 2011թ.՝ որոշ դեպքերում մենք համեմատություններ կանցկացնենք նաև այդ տվյալների հետ՝ հասկանալու, թե ինչ փոփոխություններ կամ միտումներ են նկատվել:

Եթե, օրինակ, փորձենք համեմատել այս երկու ժամանակահատվածների ուսումնասիրություններում «Հայաստան» կոնցեպտի բնորոշումները, որոնք նախապես առանձնացվել են դրական և բացասական խմբավորումներով, ապա կարող ենք տեսնել, որ «Հայաստանը» 2011թ. մեդիադիսկուրսում[3] դրական բնորոշումներով ավելի շատ է հանդես եկել, մասնավորապես՝ «հզոր Հայաստան», «անկախ Հայաստան», «Միացյալ Հայաստան», «գիտելիքների վրա խարսխված Հայաստան», իսկ 2015թ. ուսումնասիրության տվյալներով՝ այն դրական ներկայացվել է այլ պետությունների, մասնավորապես՝ Ադրբեջանի հետ համեմատության դիտակետից (տե՛ս *Աղյուսակ 1*):

Դեռևս 2011թ. հետազոտական տվյալներից մենք եզրակացրել էինք, որ «Հայաստան» կոնստրուկտը մեդիադիսկուրսում հանդես էր եկել բավական տարանջատված երեք իմաստային ենթատիպերով՝ «Հայաստան–պետություն», «Հայաստան–հայրենիք» և «Ապագա Հայաստան»[4]: Այդ պատճառով վերլուծելիս նպատակահարմար էինք համարել «Հայաստանը» դիտարկել իբրև մետաիդեոլոգեմ, իսկ վերոնշյալ երեք իմաստային միավորները՝ իբրև առանձին իդեոլոգեմներ: Պետք է նկատենք, սակայն, որ «Հայաստան–հայրենիքը» և «Ապագա Հայաստանը» ավելի հաճախ հանդիպել են հեռուստատեսային մեդիատեքստերում, իսկ մամուլն ու առցանց լրատվամիջոցները ավելի հաճախ քննարկել են «Հայաստան–պետություն» իդեոլոգեմը:

[2] Մեր դիտարկումները հիմնվում են 2011-2015թթ. տարբեր ժամանակահատվածների մեդիաբովանդակության հետազոտությունների վրա: Հոդվածում տեղ են գտել 2015թ. հոկտեմբերին իրականացված մոնիթորինգի տվյալները, որոնք դուրս են բերվել հայկական 4 թերթերի կայքերի («Առավոտ», «Հայկական ժամանակ», «Հայաստանի Հանրապետություն», «Голос Армении») և 5 առցանց լրատվամիջոցների («1in.am», «Azatutyun.am», «Panarmenian.net», «ilur.am», «Lragir.am») շուրջ 500 հոդվածի բովանդակային վերլուծության միջոցով:

[3] Մանրամասները կարելի է տեսնել «*Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում*», 2013թ., 180-181 էջեր:

[4] Մանրամասն տե՛ս «*Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում*», «Նորավանք» ԳԿՀ, 2013թ.:

Աղյուսակ 1

«Հայաստան» մետահիդեոլոգեմի բնորոշումները

Դրական բնորոշումներ
• Թշնամիներ չունեցող Հայաստան • Այլ պետությունների հետ հարաբերություններում «հանուն»-ի գաղափարախոսությամբ առաջնորդվող պետություն • Հաղթելու բավարար ուժ ունեցող պետություն • Ժողովրդավարական պետություն, որտեղ հաշվի են առնում յուրաքանչյուր քաղաքացու տեսակետը • Միջազգային խաղաղապահության և անվտանգության ակտիվ ներդրող պետություն • Հայաստանը՝ որպես մարդկային ստեղծագործական պոտենցիալ, ինժեներատեխնիկական միտք, տեխնոլոգիական ռեսուրսներ ունեցող երկիր
Բացասական բնորոշումներ
• Կիսապատերազմական վիճակում գտնվող Հայաստան • Մամռակալած պոպուլիզմ, որը երկիրն ու հասարակությունը տանում է վերջնական կործանման • Ռեսուրսային սղությամբ պետություն • Ռուսական շահի համատեքստում գործող Հայաստան • Տնտեսության գոյապահպանման ռեժիմում գտնվող պետություն • Քրեաօլիգարխիկ բռնապետական երկիր • Բարդագույն աշխարհաքաղաքական իրավիճակում գտնվող Հայաստան • Ապագայի «երազանք» չունեցող պետություն • Անպատժելիության մթնոլորտում գտնվող Հայաստան

2015թ. հետազոտության ընտրանքը ներառում էր միայն առցանց լրատվամիջոցներ և թերթերի ինտերնետային էջեր, այնուհանդերձ, դիտարկել ենք «Հայաստան» մետահիդեոլոգեմի իմաստային բոլոր ենթատիպերը: Այս հետազոտության դաշտային տվյալները ևս հաստատեցին «Հայաստանի» դրսևորման այս երեք հիմնական շրջանակները, սակայն «Ապագա Հայաստան» իդեոլոգեմն այս անգամ վիճակագրորեն նշանակալի կշիռ չունեցավ՝ հանդես գալով եզակի դեպքերում և դիտարկվելով որպես կրթված երիտասարդների կողմից կառուցվող երկիր, որը պետք է շարունակաբար զարգացնի իր կրթական ոլորտը:

Ինչ վերաբերում է «Հայաստան-հայրենիք» իդեոլոգեմին, ապա 2011թ. ուսումնասիրության համեմատ այն ևս 2015թ. տեղական մեդիաքննարկումներում թե՛ կշռով, թե՛ բնութագրիչներով առավել քիչ է հանդես եկել: «Հայաստան» մետահիդեոլոգեմի մյուս տարրերի հետ հարաբերակցության մեջ իր ծավալով «Հայաստան-հայրենիքը» երկրորդ տեղում է հանդես գալիս՝ 5.3% (տե՛ս *Աղյուսակ 2*):

Աղյուսակ 2

Մեդիադիսկուրսում «Հայաստան» մետահիդեոլոգեմի ենթատիպերի կշիռը միմյանց նկատմամբ

Հայաստան-պետություն	93,5%
Հայաստան-հայրենիք	5,3%
Ապագա Հայաստան	1,2%
Ընդամենը	100%

«Հայաստան-հայրենիք» իդեոլոգեմը դրական երանգավորմամբ քննարկվում է հայրենիքը սիրելու տեսանկյունից, և հետաքրքիր է նկատել, որ որպես տեղեկատվության աղբյուր հանդես են գալիս հայ գործարարները: Բացասական երանգավորմամբ «Հայաստան-հայրենիք» իդեոլոգեմը քննարկվել է «Առավոտ»-ի և «Հայկական ժամանակ»-ի հոդվածներում: (*«Հայրենիքը համառ բան է, փող շատ է սիրում, մեկ անգամ նրան ծառայություն մատուցեցիր՝ անվերջ նորանոր ծառայություններ է ակնկալում», «Առավոտ», «Ինչո՞ւ պետք է մարդը իր գրպանից մուծի այլոց հաշիվները», «Հայկական ժամանակ», 02.10.2015):* Ինչպես կարող ենք տեսնել *Աղյուսակ 3-ի* տվյալներից, «Հայաստան-հայրենիք» իդեոլոգեմը մեծ մասամբ մտահոգության երանգավորում ունի՝ 50%, առավել հաճախ՝ «Առավոտ»-ի, «ՀՀ»-ի *«Azatutyun.am»-ի* մեդիատեքստերում, մասնավորապես՝ այն համատեքստով, որ հայրենիքի տերը ժողովուրդն է, որը պետք է պայքարող լինի, լրացուցիչ սադրանքների չենթարկվի (հետազոտության ընտրանքային օրերը համընկնում էին սահմանադրական փոփոխությունների գործընթացի հետ, և այս միտքն առնչվում է այդ համատեքստին): Նկատենք նաև, որ խիստ բացասական երանգավորումները բացակայում են ինչպես 2011, այնպես էլ 2015թթ. մեդիադիսկուրսում: Դրա փոխարեն ի հայտ են եկել բացասական տրամադրությունները, կա մտահոգության աճ, առհասարակ զրոյացել են խիստ դրականն ու հավասարակշռվածը:

Աղյուսակ 3

«Հայաստան-հայրենիք» իդեոլոգեմի շուրջ հուզական երանգավորումները

	Խիստ դրական	Դրական	Հավասարակշռված	Բացասական	Խիստ բացասական	Մտահոգ
2011թ.	22,6%	45,3%	18,9%	-	-	11,3%
2015թ.	-	16,7%	-	33,3%	-	50%

Ինչպես տեսանք *Աղյուսակ 1*-ում, «Հայաստան–պետությունը» անդրադարձի հաճախությամբ առաջատար է «Հայաստան–հայրենիք» և «Ապագա Հայաստան» իդեոլոգեմների համեմատ: Այն հանդես է եկել մի քանի հիմնական համատեքստերում, որոնք առանձնացրել ենք ստորև:

Հայաստան-ՌԴ հարաբերությունների համատեքստ - Եթե 2011թ. հետազոտության տվյալներով Հայաստանը գտնվում էր երկընտրանքի մեջ արտաքին քաղաքական վեկտորների հարցում[5], ապա 2015թ. հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ մեդիադիսկուրսում Հայաստանը ներկայացվում է որպես Ռուսաստանից քաղաքականապես և տնտեսապես միակողմանի կախվածության մեջ գտնվող երկիր: *«…Ռուսաստանի ազդեցությունը միշտ նշանակում է միջազգային մեկուսացում, սոցիալ-տնտեսական ու մշակութային-տեխնոլոգիական հետամնացություն և ինքնիշխանության կորուստ»* (*«Lragir.am», «Մոսկվան մտադիր է երկու ամիս հետո զորք մտցնել Ղարաբաղ», 01.10.2015*):

Մեդիատեքստերում Հայաստանը ներկայացված է որպես սեփական ինքնիշխանությունը, սեփական խնդիրները Ռուսաստանի շահի համատեքստում կորցրած պետություն: «Միևնույն ժամանակ արդյո՞ք Երևանի առաջարկը ԵԱՀԿ-ին նպատակ ունի աշխուժացնել միջազգային դիմադրությունը այդ հարցում, քանի որ Հայաստանն ինքն ի զորու չէ դիմակայել Ռուսաստանի հնարավոր ճնշումներին» («Lragir.am», «Էդվարդ Նալբանդյանը խաղաղապահնե՞ր է կանչում», 02.10.2015): Քննարկվում է նաև այն տեսակետը, որ Ռուսաստանի կողմից Հայաստանի շահագործումը և թերագնահատումը միջազգային հարթակում ևս Հայաստանի նկատմամբ նման վերաբերմունքի ձևավորման հիմք են հանդիսանում:

Սահմանադրական փոփոխությունների համատեքստ - Հաշվի առնելով հետազոտության անցկացման ժամանակահատվածը՝ զգալի է «Հայաստան-հայրենիք» իդեոլոգեմի՝ հենց սահմանադրական փոփոխությունների համատեքստում ներկայացվածության ծավալը: Մեդիադիսկուրսում քննարկվում են դրանց բացասական հետևանքները, որի կարիքն այժմ երկիրը չունի: Սահմանադրական փոփոխությունները չեն լուծելու այն խնդիրները, որոնք երկիրն ունի: «Եթե ժողովուրդը քվեարկի սահմանադրական փոփոխությունն-

[5] Նույն տեղում, էջ 184:

ների օգտին, ապա դա կլինի ժողովրդի վերջին ընտրությունը: Երկիրը սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը չունի, չի՛ կարելի գնալ արկածի» («Առավոտ», «Եթե ժողովուրդը քվեարկի սահմանադրական փոփոխությունների օգտին, դա կլինի վերջին ընտրությունը», 02.10.2015):

Մեդիատեքստերում այդ իդեոլոգեմի առնչությամբ քննարկվում է այն տեսակետը, որ սահմանադրական փոփոխությունների դեմ պետք է կազմակերպված պայքարել: «*Այսօր Հայաստանը ոչ թե «ոչ» ասելու, այլ «ոչ»-ը կազմակերպելու կարիք ունի: Եթե ճիշտ, խելոք կազմակերպվեն բոլոր այն «ոչ»-երը, որոնք Հայաստանում կան, տակը ուրիշ բան չի մնա, «այո» չի մնա» («Azatutyun.am», «Ընդդիմադիր ուժերը կրկին միասնական հանրահավաք կանցկացնեն», 01.10.2015):*

ԼՂ հակամարտության համատեքստ - Տեղական մեդիադիսկուրսում Հայաստան-ԼՂՀ-ն դիտարկվում է որպես հայկական երկու կողմ: Հայաստանը հանդես է գալիս որպես ԼՂՀ անվտանգության երաշխավոր, որը պատրաստ է ցանկացած պահի պայքարել և պատժիչ գործողություններ իրականացնել:

Այս համատեքստում քննարկումն ընթանում է երկու երկրների (Հայաստան-Ադրբեջան) պոտենցիալի համեմատության շուրջ, որի արդյունքում Հայաստանը ներկայացվում է առավելություն ունեցող երկրի կերպարով. *«…անգամ զգալի ֆինանսական կորուստների պարագայում Ադրբեջանի նավթն ու գազը նրան տալիս են Հայաստանից ավելի մեծ տնտեսական ռեսուրսների հնարավորություն: Մյուս կողմից, սակայն, Հայաստանն իր հերթին ունի անհամեմատ ավելի նշանակալի ռեսուրսային առավելություն՝ մարդկային ստեղծագործական պոտենցիալը, ինժեներատեխնիկական միտքը, տեխնոլոգիական ռեսուրսը» («Lragir.am», «Հայաստան, որ կծածկի ադրբեջանական նավթն ու գազը», 01.10.2015):*

Համեմատելով 2011թ. հետազոտության տվյալների հետ՝ կարող ենք նկատել, որ մեդիաքննարկումներում «Հայաստան-պետություն» իդեոլոգեմի նկատմամբ այժմ առավել մեծ կշիռ են կազմում մտահոգ քննարկումները (*տե՛ս Աղյուսակ 4*), ինչն էլ պայմանավորված է Հայաստանում տեղի ունեցող սահմանադրական փոփոխությունների և Ռուսաստանից Հայաստանի ուղղակի կախվածության ընկալումների գործոնով:

Աղյուսակ 4

«Հայաստան-պետություն» իդեոլոգեմի նկատմամբ հուզական երանգավորման հաճախությունների համեմատական նկարագիր, 2011թ. և 2015թ.

	Խիստ դրական	Դրական	Հավասա-րակշռված	Բացասական	Խիստ բացասական	Մտահոգ
2011թ.	0,8%	20,3%	38,1%	21,5%	1,6%	17,7%
2015թ.	2,5%	19,4%	15,6%	10%	1,9%	50,6%

Լրատվամիջոցների վերլուծությունից նկատելի է, որ «Հայաստան-պետություն» իդեոլոգեմին դրական երանգավորմամբ անդրադարձել են «ՀՀ»-ն՝ 66.6%, «Panarmenian.net»-ը՝ 37.5%, «Azatutyun.am»-ը՝ 33.3%, երանգավորման ծայրահեղ դրսևորումներով աչքի է ընկնում «Panarmenian.net»-ը՝ խիստ դրական 12.5%-ով, խիստ բացասական՝ 12.5%: Բացասական երանգավորման մեծ կշիռ նկատվել է «Առավոտ»-ի նյութերում՝ 21.1% (տե՛ս *Աղյուսակ 5*).

Աղյուսակ 5

«Հայաստան-պետություն» իդեոլոգեմի նկատմամբ հուզական երանգավորման հաճախություններն ըստ դիտարկված լրատվամիջոցների

Լրատվամիջոց	Խիստ դրական	Դրական	Հավասա-րակշռված	Բացասական	Խիստ բացասական	Մտահոգ	Ընդամենը
Էլեկտրոնային							
1in.am	3,1%	21,9%	12,5%	9,4%	-	53,1%	100%
Azatutyun.am	11,1%	33,3%	11,1%	-	-	44,4%	100%
Panarmenian.net	12,5%	37,5%	13%	-	12,5%	25%	100%
Lragir.am	-	6,25%	9,4%	12,5%	-	71,8%	100%
Ilur.am	-	-	12,50	-	-	87,5	100%
Լրագրեր							
Առավոտ		18,4%	23,7%	21,1%	-	36,8%	100%
ԳԱ	7,7%	23,1%	7.7%	15.4%	-	46,1%	100%
ՀԺ	-	14,3%	28,6%	7,1%	-	16,6%	100%
ՀՀ	-	66,6%	16,6%	-	-	16,6%	100%

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 26.04.2016թ.
Թիվ 2 (71), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում